

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ ԻՆՉՈՒ Կ'ԱՊՈՎԿԵ ԱԼԻԵ

«Եթե Հայաստան իսկապես խաղաղութիւն կ'ուզէ Ատրպէյճանի հետ, ապա ինչո՞ւ պէտք է հարկեր միլիոնաւոր տոլարներու գէնք գնէ», ըսած է Ատրպէյճանի բռնապետ Իլիամ Ալիեւ խօսքը ուղղելով Հնդկաստանի դեսպանին, նկատի առնելով որ, վերջին շրջանին այդ երկիրը դարձած է Հայաստան գէնք վաճառող գլխաւոր երկիրը՝ չըսելու համար միակը:

Ալիեւ կը բողոքէ Հայաստանի ծախսած գումարներու մասին երբ, իր երկրի պաշտպանութեան պիտոճէն մօտ երեք անգամ աւելի է քան Հայաստանինը: 2023 թուականի համար Ատրպէյճան յատկացուցած է 3.1 միլիարդ տոլար, մինչ Հայաստանի այս տարուայ պիտոճէնով բանակին համար նախատեսուած է 1.28 միլիարդ տոլար: Ալիեւի տրամաբանութեամբ՝ իր երկիրը աւելի նուազ հետամուտ է խաղաղութեան՝ քան Հայաստանը, նկատի առնելով որ, Ատրպէյճան կը շարունակէ իր քարիւղէն ու կազէն գոյացած եկամուտները ծախսել սպառազինութեան վրայ, փոխանակ այդ գումարները յատկացնելու իր ժողովուրդի բարօրութեան: Հայաստան պարզապէս պաշտպանուելու համար կը կը փորձէ ետ չմնալ մրցավազքէն:

Պատմութեան ընթացքին միշտ ինքզինք աւելի ուժեղ նկատող երկիրն է որ, յարձակած է իրմէ տկարին վրայ, որպէսզի կարողանայ գէնքի ուժով իր կամքը պարտադրել դիմացինին: Այժմ, նոյնը կը կ'ընէ Ատրպէյճան՝ նախ յարձակելով Լեռնային Ղարաբաղի վրայ եւ ապա խախտելով Հայաստանի ինքնիշխան սահմանները:

Արցախեան 44-օրեայ պատերազմը եկաւ բացայայտելու որ, վերջին տասնամեակներուն Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ ռազմական հաւասարակշռութիւնը խախտած է՝ ի նպաստ վերջինին: Շուէտի մայրաքաղաք Սթոկհոլմի մէջ գործող՝ Միջազգային Խաղաղութեան Ուսումնասիրութեան Հիմնարկի 2021-ի տուելներուն համաձայն, 2011-2020 տարիներու ընթացքին Պաքու ներմուծած է 3.274 միլիարդ տոլարի գէնք. իսկ նոյն ժամանակաշրջանին Հայաստան՝ ընդհանուր 398 միլիոն տոլար ծախսած է այդ նպատակին համար: Իսկ այդ գումարին 248 միլիոնը՝ 2019-ին, այսինքն՝ իշխանափոխութենէն ետք: Ուսումնական հասարակշռութիւն խախտումը գլխաւոր գործօնն էր Հայկական բանակի կրած պարտութեան ու մեր ժողովուրդի այսօրուն դիմագրաւած վիճակին համար:

## 86,6 Հազար Քառակուսի Կիլոմետրը Կը Ներառէ Նաեւ Լեռնային Ղարաբաղը. Փաշինեան

Մայիս 22-ին հրաւիրուած ասուլիսի ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինեան հաստատեց՝ 86 հազար 600 քառակուսի քիլոմետրը կը ներառէ նաեւ Լեռնային Ղարաբաղը:

«ՀՀ 29,800 քառ. քմ-ի մէջ մտնում է նաեւ Արծուաշէնը, Ատրպէյճանի 86,600 հազար քառ. քմ-ի մէջ այդ հաշուարկներով մտնում են նաեւ անկլաները», յայտնեց վարչապետը եւ աւելցուց, որ այս տակաւին քաղաքական դիրքորոշում է, իսկ հարցին իրաւական մասը դեռ պէտք է դիտարկել:

«Հայաստանի այսօրուայ կառավարութիւնն ինչ ասի, չայտանի Հանրապետութեան բոլոր կառավարութիւնները ճանաչել են Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը, եւ ես ասել եմ, որ աւելի եմ կոնկրէտացրել եւ աւելի կոնկրէտ դժուար եմ պատկերացնում, թէ ինչպէս կարող եմ ասել՝ 86, 6 հազար կմ տարածքային ամբողջականութիւնը Հայաստանի Հանրապետութիւնը պատաստ է ճանաչել եւ, մեր ընկալմամբ, Ատրպէյճանը պատրաստ է ճանաչել Հայաստանի Հանրապետութեան 29 հազար 800 քառակու-



Վարչապետ Նիկոլ Փաշինեան մամուլի ասուլիսի ընթացքին

սի կիլոմետր տարածքային ամբողջականութիւնը: Եթէ մենք ճիշտ ենք հասկանում մենք այս հարցում Ատրպէյճանի հետ իրար, Հայաստանի Հանրապետութիւնն, այո՛ ճանաչում է Ատրպէյճանի 86,6 հազար տարածքային ամբողջականութիւնը, էն ըմբռնմամբ, որ Ատրպէյճանը ճանաչում է Հայաստանի Հանրապետութեան 29 հազար 800 քա-

ռակուսի կիլոմետր տարածքը», - ըսաւ կառավարութեան ղեկավարը: Փաշինեանը նաեւ շեշտեց՝ Լեռնային Ղարաբաղի հայութեան իրաւունքները եւ անվտանգութեան հարցը պէտք է քննարկուի Ստեփանակերտ-Պաքու երկխօսութեան միջոցով:

## ՍԴՀԿ Պատուիրակութեան Այցելութիւնը Առաջնորդ՝ Յովնան Արք. Տէրտէրեանին



ՍԴՀԿ ներկայացուցիչները Առաջնորդ Սրբազան հօր հետ հանդիպման ընթացքին

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմինի պատուիրակութիւնը այցելեց Հայ Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի առաջնորդ՝ Յովնան Արք. Տէրտէրեանին շնորհաւորելու համար գինք՝ իր վերընտրութեան առթիւ:

Հանդիպումի ընթացքին եղան կարծիքներու փոխանակում համայնքային տարբեր հարցերու շուրջ:

Երկուստեք մտահոգութիւն յայտնուեցաւ Հայաստանի ու Արցախի մէջ տիրող կացութեան մասին եւ կարեւոր նկատուեցաւ

որ, Լոս Անճելըսի Հայ Համայնքը մնայ միասնական:

Հնչակեան պատուիրակները ներկայացուցին կուսակցութեան յառաջիկայ ծրագիրները, ինչպէս նաեւ ծանօթացան Առաջնորդարանի կողմէ ծրագրուող աշխատանքներուն: Որոշեցաւ սերտացնել երկկողմ համագործակցութիւնը:

ՍԴՀԿ պատուիրակութեան մաս կը կազմէին ընկերներ՝ Վազգէն Խոտանեան, Միհրան Խաչատուրեան, Վահէ Աջապահեան եւ ընկերուհի Կարինէ Տէփոյեան:

Հանդիպումին ներկայ էր Յովնան Սրբազանի օգնական՝ Տէր Երեմիա վարդ. Աբգարեան:

## Եթե Հայաստան Խաղաղութիւն Կ'ուզէ, Ապա Ինչո՞ւ Հարկեր Միլիոնաւոր Տոլարներու Ձէնք Կը ԳՆԵ ԱԼԻԵ

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ, ընդունելով իր երկրին մէջ Հնդկաստանի նորանշանակ դեսպան Շրիտհարան Մատոյուտուհանանի հաւատարմագրերը, իր ելոյթին մէջ անդրադարձած է նաեւ հայ-ատրպէյճանական յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին:

Ատրպէյճանի առաջնորդը կրկին պնդած է, որ Հայաստանի մէջ կը գործեն «ուեւանչիստական ուժեր, որոնք տակաւին տարածքային յաւակնութիւններ ունին»:

«Խօսելով այն մասին, որ Հայաստանի սրբնթաց սպառազինուելը նոր սպառնալիքներ կը ստեղծէ, պետութեան ղեկավարը նշած է, որ եթէ Հայաստանը իսկապէս խաղաղութիւն կ'ուզէ Ատրպէյճանի հետ, ապա ինչո՞ւ պէտք է հարկեր միլիոնաւոր տոլարներու գէնք գնէ», կ'ըսուի Ատրպէյճանի նախագահի Մամուլի ծառայութեան հաղորդագրութեան մէջ:

Ալիեւ պնդած է, որ Հայաստանի այդ քաղաքականութիւնը «կրնայ յանգեցնել տարածաշրջա-

# ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## Կովկասի խաղաղութեան Միջազգային Երաշխիքը, Փաշինեանը «Բացում» Ե Պատկերը

ՅԱԿՈԲ ԲԱՐԱԼԵԱՆ

Ռեզիդենտը անվտանգութեան համար պատասխանատուութիւնը շատ բարձր խնդիր է, որը կարող է պատասխանատուի թէ վարկը բարձրացնել, թէ հարուածել հեղինակութեանը, իր Մալխի 22-ի ասուլիսում յայտարարել է վարչապետ Նիկոլ Փաշինեանը, անդրադառնալով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղութեան երաշխիքին եւ նշելով, թէ այնպէս էլ, որ կան այդ երաշխաւորը լինելու պատրաստ ուժեր եւ հերթ են կանգնել դա ստանձնելու համար: Այլ հարց է, ըստ Փաշինեանի, որ Հայաստանի եւ Ադրբեջանի մօտ խաղաղութեան իրական կամք տեսնելու պարագայում, կը գտնուեն այդ խաղաղութիւնը երաշխաւորելու պատրաստակամութիւն ունեցող ուժեր:

Հայաստանի վարչապետը նշում է, որ դա իր տպաւորութիւնն է՝ ըստ այն քննարկումների, որ ունենում է արտաքին դաշտում: Փաստացի, Նիկոլ Փաշինեանը արձանագրում է ներկայիս իրողութիւնների ամենակարեւոր, հիմնաքարային շերտը: Չկայ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղութիւն երաշխաւորելու պատրաստ միջազգային դերակատար կամ կառույց, եթէ Հայաստանն ու Ադրբեջանը իրենք պատրաստ չեն այդ խաղաղութեանը եւ դա չեն դիտարկում իրենց առանցքային

նպատակ: Իհարկէ Երեւանն էլ, Բաքուն էլ խօսում են խաղաղութեան մասին, բայց ակնառու է, որ Ադրբեջանը պատկերացնում է խաղաղութիւն, որը ըստ էութեան Հայաստանի պետական գոյութիւնը կը վերածի պարզապէս ցուցանակի, Ադրբեջանի համար ամբողջապէս վերահսկելի եւ կառավարելի: Այլեւս նոյնիսկ բաց կերպով խօսում է Հայաստանի սպառազինման անթոյլատրելիութեան մասին: Եթէ Այլեւս հրաժարուէր նաեւ Ադրբեջանի սպառազինման գաղափարից, ապա թերեւս հնարաւոր կը լինէր խօսել խաղաղութեան պատրաստակամութեան մասին, սակայն Ադրբեջանը խաղաղութիւնը պատկերացնում է Հայաստանի պետականութեան ըստ էութեան քաղաքական, հոգեբանական, ռազմաքաղաքական եւ անգամ տնտեսական անդամահատման տրամաբանութեան մէջ, հետեւաբար դա մեղմ ասած խաղաղութեան ցանկութիւնն է:

Որովհետեւ, ի վերջոյ, եթէ նոյնիսկ տեսականում պատկերացնենք, որ Հայաստանն անգամ այդ պայմաններով գնում է համաձայնութեան, հարց է առաջանում, թէ դրանից յետոյ որեւէ միջազգային երաշխիք խաղաղութեան երաշխիք է, թէ՞ պարզապէս ըստ այս կամ այն իրողութեան Հայաստանի հանդէպ անզուսպ եւ անկաշկանդ ազդեւիւր իրականացնելու Ադրբեջանի հնարաւորութեան երաշ-

խիք: Առաւել եւս, եթէ հաշուի առնենք այն հանգամանքը, որ Կովկասը այն ռեզիդենտ է, որտեղ խաղաղութիւնը եւ քաղաքակրթական շահեր, ու շարունակելու է լինել այդպիսի ռեզիդենտ, ինչը բնականաբար նշանակում է, որ ռեզիդենտ կայունութեան հարցն էլ շարունակելու է գտնուել հէնց այդ մեծ հոսանքների ազդեցութեան ներքոյ:

Հետեւաբար, պէտք է թերեւս արձանագրել, որ ռեզիդենտ անվտանգութեան ու կայունութեան երաշխիքը կարող է լինել կամ բազմակողմ, կամ այսպէս ասած՝ միատարր: Այսինքն, ոչ թէ մէկ սուբիեկտի երաշխիք, այլ երաշխիք, որը ենթադրում է Հայաստանի, Ադրբեջանի ու վրաստանի ներառութիւն սուբիեկտային մէկ շրջանակի մէջ, ինչպէս օրինակ ՆԱՏՕ: Հագիւ թէ այդ տարբերակը հաւանութիւն ունենա Կովկասի որեւէ հանրապետութիւնում, եւ առաւել եւս իրատեսական լինի այդօրինակ որեւէ տարբերակի հեռանկարը՝ հնարաւորութիւնների կամ աւելի շուտ դրանց բացակայութեան օբիեկտիւ ու սուբիեկտիւ խճանկարի բերումով: Հետեւաբար, Կովկասի կայունութեան միջազգային երաշխիքը կարող է լինել միայն բազմակողմ տրամաբանութեամբ, ինչը մեծ հաշուով դուրս է Հայաստանի ու Ադրբեջանի ցանկութիւնից կամ

խաղաղութեան կամքից: Քանի դեռ չկայ բազմակողմ տար մեխանիզմը, եւ աշխարհում ներկայումս պայքարի է եւ ազդեցութեան վերադաստիարակման գործընթաց, Հայաստանին չի մնում այլ բան, քան անվտանգութեան շատ թէ քիչ կայուն արտաքին աջակցութիւն ստանալու համար առաւելագոյն արդիւնաւէտ աշխատել նոյն բազմակողմ ուղղութեամբ՝ տարբեր բեւեռների հետ երկկողմ յարաբերութեան խորացմանը միտուած օրակարգով: Երեւանը փորձում է անել դա, թէեւ հարց է, թէ ինչ արդիւնաւէտութեամբ: Առաւել եւս, որ դա ենթադրում է իհարկէ բարձր մասնակցութիւն, որպէսզի միւս բեւեռների համար հասկանալիօրէն բացատրելի դառնա այն խնդիրը, որ փորձում է լուծել Հայաստանը: Միաժամանակ, գլխաւոր խնդիրը, որ դրան գուրահեռ պէտք է լուծի Հայաստանի, շարունակում է լինել ուժերի վերականգնումը՝ պաշտպանկանից մինչեւ տնտեսական, հասարակական-քաղաքացիական, ինստիտուցիոնալ կ'առուցուածքային: Ակնառու է, որ այստեղ կան խնդիրներ՝ օբիեկտիւ ու սուբեյեկտիւ պատճառներով, բայց կան խնդիրներ, որոնք պահանջում են մի կողմից իհարկէ ժամանակ, միւս կողմից սակայն ժամ/արագութեան էական աւելացում: **«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»**  
Յապաւումներով

## Կարմիր Կովն Իր Կաշին Զի Փոխի

ՅԵՂԻՆԵ ՍԱՆՈՒԿԵԱՆ

Խորհրդարանական ընդդիմութիւնը փոխել է իշխանափոխութեան հասնելու մարտավարութիւնը, իսկ այժմ «կարմիր կաշին»՝ հայկական ասացուածքի յայտնի պերսոնաժի տրամաբանութեամբ՝ ոչ:

Մարտավարութեան փոփոխութիւնն ասելով՝ նկատի ունենք այն, որ Արցախ-հայրենափրկութեան շարժման «գարուն-աշուն» սեզոնը տապալելուց յետոյ որոշել է ռազմահայրենափրկական աղմուկ-աղաղակով չփչացնել ժողովրդի գարունը, հանգիստ թողնել Ֆրանսիայի հրապարակն ու երեւանեան փողոցները, փոխարէնը «մինի» հաւաքներ կազմակերպել ՀՀ տարբեր համայնքներում ու, «նայած հանգամանքներին», գնալ հայրենիքի «հրավտանգ» հատուածները: Ինչպէս ասում են, «ճաշակին ընկեր չկայ», անգամ՝ ընդդիմադիր գործունէութեան ձեւի ու բովանդակութեան հարցում, բայց այժմ «ընկեր դաշնակների» վարքագծի ու «ընդդիմադիր ճաշակի» որոշ դրսեւորումներ շարունակում են ծալրայեղ մտահոգիչ լինել, եթէ չասենք՝ սպառնում են ազգային անվտանգութեանն ու խախտում համազգային համերաշխութիւնը:

«Հայաստան» խմբակցութեան որոշ պատգամաւորներ՝ Իշխան Սաղաթեանը, Գառնիկ Դանիէլեանը, Ասպրամ Կրպէճեանը, Քրիստինէ Վարդանեանը, Արգիշտի Գէորգեանը, Արման Զաքարեանը, եղել են Սոթք եւ Կոլք համայնքներում: «Այս պահին միայն մի բան կարող եմ ասել. Հայաստանում կայ մեր ժողովրդին եւ մեր հայրենիքը պաշտպանելու ռեսուրս: Չնայած

բանակի հետեւողական կազմաբանումներ՝ հայ զինուորը խիզախ է եւ պատրաստ պաշտպանել մեր երկիրը: Բանակի եւ զինուորի թիկունքում ամուր կանգնած է թշնամու կրակոցների տակ սեփական հողը մշակող հայ մարդը: Իրավիճակի ամենամեծ խնդիրը պետութեան կողմից սեփական երկրի եւ ժողովրդի պաշտպանութեանն ուղղուած համակարգային գործողութիւնների բացակայութիւնն է», - ազդարարել է համազգային համախմբումից, բանակի հեղինակութեանն ակնածանքով վերաբերուելու մասին օրումէջ ճամարտակող ընկեր Իշխանը՝ Սաղաթեանը:

Նկատենք, որ երբ իշխանութիւնը գինուած ուժերի բարեփոխումներ համատեքստում խօսում էր նախկին իշխանութեան օրօք բանակում եղած խնդիրների մասին, նոյն Սաղաթեանն ու նրա գաղափարակիր ընկերները իշխանութեանը մեղադրում էին բանակն անուանարկելու, հեղինակազրկելու, ՋՈՒ վերնախաւին հալածելու եւ այլ անհեթեթութիւնների համար, իսկ այժմ, փաստօրէն, «պոստֆակտում» այցելում են այն վայրեր, որտեղ բանակը կատարել է իր մարտական առաջադրանքը եւ նոյն այդ բանակը բարոյալքող յայտարարութիւններ անում: Նման վարքագիծը բնորոշ է ոչ թէ հայրենասէրներին, այլ թշնամուն, կամ էլ թշնամու քարոզչական վարձկաններին:

Դիմադրութեան շարժման կազմակերպիչը սեփական մտքերի կազմակերպման ու արտածման պրոցեսը վերահսկելու կարիք ունի՝ գուրահեռաբար շտապելով տրամաբանութեան խորացումը դա-

սընթացների Սաղաթեանի «կուռ» տրամաբանութեամբ ստացում է՝ իշխանութիւնը «կազմաբանում է» բանակը, եւ, ի հեճուկս այդ քայլից գործողութիւնների, եթէ կ'ուզէք՝ Նիկոլ Փաշինեանի եւ ՊՆ ղեկավարութեան «ինադու», հայ զինուորը խիզախօրէն կուռում է՝ պատրաստ լինելով պաշտպանել հող հայրենին: Դաշնակցական տրամաբանութիւնը, փաստօրէն, «բանակ» ասելով՝ պատկերացնում է ապակետորն, «ինքնազուխ» գինուած խմբաւորումներ, ասենք՝ ֆիդայական կամ պարտիզանական ջոկատներ:

Առաջիկայ հանգստեան օրերին Իշխան Սաղաթեանը լաւ կ'անի՝ մի գլուխկոտրուկ լուծի՝ եթէ պետութիւնը կազմաբանում է կամ կազմաբանող է բանակը, ապա ինչպէս է այդ կազմաբանողութեամբ, այսինքն՝ գոյութիւն ունեցող, լուծարուած մարմնի բջիջը՝ զինուորը, յաջողութեամբ հետ մղում հակառակորդին: Եթէ դժուարանայ լուծել, կարող է դիմել «Հայաստան» խմբակցութեան ղեկավար Սեյրան Օհանեանին, որը բանակում ծառայութեան պատկառելի փորձ ունի եւ կարող է օգտակար լուծումներ անել:

Այժմ դառնանք Սաղաթեանի մտքի մէկ այլ թռիչքի՝ «իրավիճակի ամենամեծ խնդիրը պետութեան կողմից սեփական երկրի եւ ժողովրդի պաշտպանութեանն ուղղուած համակարգային գործողութիւնների բացակայութիւնն է»: Հարց է ծագում՝ ի՞նչ նկատի ունի Աժ նիստերից յաճախակի

Շար.ը էջ 6



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻԶ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

ԼՈՒՐԵՐ

Երեւանի Աւագանիի Ընտրութիւնները Տեղի Պիտի Ունենան Սեպտեմբեր 17-ին

Երեւանի աւագանիի ընտրութիւնները տեղի պիտի ունենան Սեպտեմբերի կէսին, օրը դեռ պէտք է նշանակէ կառավարութիւնը, սակայն Հանրապետի եթերով Կեդրոնական Ընտրական Ցանձնաժողովի նախագահ Վահագն Յովակիմեանը ներկայացնելով օրէնքի պահանջը՝ բացատրեց, որ քուէարկութիւնը պէտք է տեղի ունենայ Սեպտեմբեր 10-20 ինկած առաջին Կիրակի օրը, օրացոյցով այդ Սեպտեմբեր 17-ն է:

«Ստացուած է՝ ամառային արձակուրդների թէ՛ շրջանում նաեւ սկսուելու է քարոզարշաւ», նշեց Յովակիմեան:

Իշխող «Քաղաքացիական Պայմանագիր»ը մէկ տարի առաջ յայտարարած էր, որ Երեւանի քաղաքապետի ընտրութիւններուն իրենց թեկնածուն նախկին փոխվարչապետ, ներկայիս փոխքաղաքապետ Տիգրան Աւինեանն է: Խորհրդարանական ընդդիմութիւնը դեռ լուռ է: «Հայաստան» խմբակցութեան քարտուղար Արծուիկ Մինասեան «Ազատութեան» փոխանցեց, որ այդ մասին պիտի խօսին մէկ շաբաթէն:

Խմբակցութեան պատգամաւոր Անդրանիկ Թեւանեանը, սակայն, «Ազատութեան» հետ զրոյցին չհերքեց իր թեկնածութեան հաւանականութիւնը՝ բայց յաւելեց, որ հիմա անոր մասին խօսելու ժամանակը չէ:

«Չբացառելով մասնակցութիւնը՝ վաղաժամ եմ համարում այն պարզ պատճառով, որ մեր երկիրը հիմա այնպիսի հոլովոյթների մէջ է մտել եւ այնպիսի անվտանգային խնդիրներ կան, որ առաջնայինն այդ խնդիրներն են», ըսաւ Թեւանեան:

«Պատիւ Ունեմ»-էն ալ փոխանցեցին, որ այս հարցը դեռ խմբակցութեան մէջ չեն քննարկած:

33-ամեայ Աւինեանէն բացի, մայրաքաղաքի ղեկավարի պաշտօնը զբաղեցնելու ցանկութիւն յայտնած են նաեւ երգիչ Ռուբէն Հախուերտեանը, գործարար Տիգրան Արզաքանցեանի կինը՝ Նաթալիա Ռոթենպերկը: Աւագանիի անդամ Դաւիթ Խաթապեանն ալ անցեալ ամիս տեղեկացուց, որ «Լուսաւոր Հայաստան» թեկնածուն ինքը պիտի ըլլայ:

Հակափտածութեան Դատարանին Մէջ Տեղի Ունեցաւ Երեւանի Նախկին Քաղաքապետ Գագիկ Բեգլարեանի Դատական Նիստը

Հակափտածութեան Դատարանին մէջ տեղի ունեցաւ Երեւանի նախկին քաղաքապետ, Կապի եւ փոխադրութեան նախկին նախարար Գագիկ Բեգլարեանի, անոր կինը՝ Նունէ Նիկոլեանի, որդիին՝ Հրանդ Բեգլարեանի եւ դստեր՝ Նաթալիա Բեգլարեանի՝ ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործով դատական նիստը, դատաւոր Նարինէ Աւագեանի նախագահութեամբ:



Երեւանի Նախկին քաղաքապետ, Կապի եւ փոխադրութեան Նախկին Նախարար Գագիկ Բեգլարեան

Րուն մէջ գտնուող անշարժ գոյքերը, Կոտայքի մարզին մէջ (համայնք Ծաղկաձոր) գտնուող 2 հողամասերը եւ Արարատի (համայնք Սիւ) մարզին մէջ գտնուող 1 հողամասը, 1 փոխադրամիջոցը (MERSEDES-BENZ S600) մակնիշի ինքնաշարժ, իսկ անհնարինութեան պարագային՝ անոնց միջին շուկայական արժէքը, որ ընդհանուր կը կազմէ 10.704.483.825 ՀՀ դրամ:

ԱԱԾ-ն Կը Հաղորդէ 250 Միլիոն Եւրոյի Քոքայի Մաքսանենգութեան Բացայայտման Մասին


Բացայայտուած են խումբ մը անձերու կողմէ նախնական համաձայնութեամբ առանձնապէս մեծ չափերով թմրամիջոց իրացնելու եւ առանձնապէս մեծ չափերով թմրամիջոցի մաքսանենգութիւն կատարելու դէպքեր, կը հաղորդէ Հայաստանի Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը:

ԱԱԾ մամուլի կեդրոնին փոխանցմամբ Հայաստանի մէջ գործող եւ միտքերու ներմուծմամբ զբաղող ընկերութեան կողմէ էքսուստորի մէջ գտնուող ընկերութեան պատուիրուած ապրանքատեսակին հետ տարանցիկ երկիրներ-

րու՝ Փանամայի, Իտալիոյ եւ Վրաստանի տարածքով Հայաստան ներմուծուած է «քոքային» տեսակի շուրջ մէկ թոն քաշով թմրամիջոց (շուրջ 250 միլիոն եւրօ արժողութեան), որ յայտնաբերուած է եւ կը գտնուի ԱԱԾ-ին մօտ:

Հայկական կողմին հաղորդագրութիւնը կը յաջորդէ Իտալական ոստիկանութեան բացայայտման, երբ պարզուեցաւ, որ Իտալական նաւահանգիստին մէջ յայտնաբերուած 2,7 թոն քոքայինը պանանի արկղերով էքսուստորէն պէտք է տեղափոխուէր Հայաստան:

Աշոտ Փաշինեանը Առեւանգելու Համար Կասկածուող Գայիանէ Յակոբեանը Սէկ Ամիսով Կալանաւորուեցաւ



Վարչապետի որդին՝ Աշոտ Փաշինեան

Աշոտ Փաշինեանը առեւանգելու համար կասկածուող Գայիանէ Յակոբեանը 1 ամիսով դատարանին որոշմամբ կալանաւորուեցաւ:

Նշենք, որ վերջինս ձերբակալուելու որոշման բողոքի եւ կալանաւորելու միջնորդութեան քննութիւնը տեւեց երկու օր: Այն տեղի ունեցաւ Շէնգաւի ղատարանին մէջ:

Վարչապետի որդին իրաւապահներուն ըսած է, որ վերաքննիչ ղատարանի դիմացի հատուածով քալած է դէպի Գարեգին Նժդէհի հրապարակ, դատարանի բակին մէջ կանգնած՝ պատերազմի ժամանակ զոհուած զինուորներու ծնողները մօտեցած են իրեն, ձայն տուած, ոմանք նաեւ որոշակի խօսքեր հնչեցուցած են: Կիրերէն մէկը, ըստ Փաշինեանի տուած հաղորդման, առաջարկած է նստիլ իր ինքնաշարժը, որպէսզի կարենան հանգիստ գրուցել, եւ երբ ինք նստած



Առեւանգելու համար կասկածուող Գայիանէ Յակոբեան

է ինքնաշարժը, կինը անսպասելի վարած է զայն՝ ըսելով, որ քիչ մը հեռու պիտի երթան, որպէսզի իրենց չխանգարեն, սակայն պահ մը կանգ առած ինքնաշարժէն Փաշինեանը յաջողած է դուրս թռչիլ, որուն հետեւանքով նրանանոր վրա երթի ենթարկած է ետեւէն ընթացող ինքնաշարժը: «Հայկական ժամանակ»-ը գրած էր, որ «առեւանգման մասնակիցները «Որդիներու կանչ» հասարակական կազմակերպութեան անդամներն են»:

«Որդիներու կանչ» հասարակական կազմակերպութեան անդամ է նաեւ Գարիկ Գալէեանը, որ եւս մասնակցած է Աշոտ Փաշինեանի առեւանգման:

Ի դէպ, սա առաջին դէպքը չէ, երբ Գարիկ Գալէեանը աչքի կ'իջնայ ոչ-հաւասարակշիռ պահուածքով, ան 2022 թուականին ալ կը սպառնար ահաբեկչութեամբ՝ դպրոց ու մանկապարտէզ գրաւելու:

Եւ Սէկ Հայկական Ընկերութիւն Ամերիկեան Պատժամիջոցներուն Տակ

Հայաստանի 732-րդ ամենամեծ հարկատուն յայտնուած է ամերիկեան պատժամիջոցներու տակ: Ուաշինկթըն օրերս նոր ցուցակ հրապարակեց, ուր շուրջ 7 տասնեակ ուսական ընկերութիւններու կողքին նշուած էր նաեւ Երեւանի մէջ գործող «Մետիսար»-ի անունը:

Ամերիկեան կողմին պնդմամբ՝ ցանկին մէջ ընդգրկուած ընկերութիւնները կ'աջակցին ուսական բանակին եւ ռազմարդիւնաբերութեան:

2001 թուականին հիմնադրուած «Մետիսար»ը անդանիւթեր, տարրալուծարանային սարքաւորումներ կը ներկրէ: «Մետիսար»ը իրեն կը ներկայացնէ որպէս այս ոլորտին մէջ գործունէութիւն ծաւալող Հայաստանի ամենամեծ ընկերութիւնը:

Աւելի վաղ ալ ամերիկեան պատժամիջոցներու տակ յայտնուած էր Հայաստանի մէջ արձանագրուած մէկ այլ ընկերութիւն՝ «Թաքօ», որ գործունէութիւն կը ծաւալէ ելեկտրոնային սարքերու առեւտուրի ոլորտին մէջ:

Հայաստանի միջոցով Ռուսիա արդիւրուած ապրանքներ հասցնելու վերաբերել ամերիկեան նախագուշացումներէն յետոյ հիմա ալ Եւրոմիութիւնը կը յայտարարէ՝ դէպի Ռուսիա արտահանման ծաւալներու զգալի աճը կասկածելի է:

«Առանձին համակարգերու բացերու շնորհիւ պատժամիջոցները շրջանցել ուզողները կրնան այդ ընել, առեւտուրի միջոցով պատժամիջոցները շրջանցելու որոշակի ձեւեր կան», նախօրէին յայտնած է Եւրոմիութեան տնտեսական հարցերով յանձնակատար Փաուլօ ձենթիլոնին: Բարձրաստիճան պաշտօնեան մատնացոյց ըրած է ԵՄ պետութիւններէն շարք մը երկիրներ եւ այդ պետութիւններէն դէպի Ռուսիա արտահանման զգալի աճը: Ղազախիստանի եւ Ղրղզիստանի կողքին տուած է նաեւ Հայաստանի անունը:

Ըստ Euronews-ի՝ ուսու-ուքրանական պատերազմի մեկնարկէն յետոյ՝ 2022-ին ԵՄ անդամ պետութիւններէն Հայաստան արտահանման ծաւալները շուրջ 1,9 միլիարդ եւրօ կազմած են, այնինչ նախապատերազմական 2021-ին այս ցուցանիշը 860 միլիոն էր:

Միեւնոյն ժամանակ, պաշտօնական տուեալներով՝ անցեալ տարի Հայաստանէն Ռուսիա արտահանումը 2021-ի համեմատ աճած է գրեթէ 3 անգամ՝ գերազանցելով 4 միլիարդ տոլարը: Օրինակ, եթէ 2021-ի առաջին վեց ամիսներուն Հայաստանէն Ռուսիա արտահանուած էր 745 հատ հեռախօս, մոտոր, ապա 2022-ի նոյն ժամանակահատուածին թիւը հասած է 53 հազարի:

# ԼՈՒՐԵՐ

## Վարչապետը Ընդունած է ՄԹ Երրօրյա Յարգերով Պետական Նախարար Լեօ Տոքերթին



Փաշինեան Կը հանդիպի Միացեալ Թագաւորութեան Երրօրյա Յարգերով պետական նախարար Լեօ Տոքերթին

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է Միացեալ Թագաւորութեան Երրօրյա Յարգերով պետական նախարար Լեօ Տոքերթին:

Վարչապետը ողջունած է Տոքերթիի այցը Հայաստան եւ կարեւորած է Միացեալ Թագաւորութեան հետ տարբեր ոլորտներու մէջ սերտ համագործակցութիւնն ու զարգացումը: Նիկոլ Փաշինեանը համոզմունք յայտնած է, որ երկկողմ յարաբերութիւնները ունին յառաջընթացի մեծ ներուժ:

Լեօ Տոքերթին նշած է, որ արդէն իսկ յայտարարուած է Հայաստանի հետ ռազմավարական երկխօսութիւն սկսելու մասին եւ յաւելած է, որ իրենք հետաքրքրուած են տարբեր ուղղութիւններով կապերու ընդլայնմամբ:

Մասնաւորապէս, քննարկուած են առեւտրատնտեսական փոխգործակցութեան, արեւալին ու ժամիւթի եւ այլ ոլորտներու մէջ ծրագիրներու իրականացման հնարաւորութիւններուն վերաբերող հարցեր: Վարչապետ Փաշինեան յաւելած է, որ ՀՀ կառավարութիւնը

շահագրգիռ է հայկական շուկայ բրիտանացի ներդրողներու ներգրւումը:

Անդրադարձ կատարուած է նաեւ հայ-ատրպէյճանական յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին, տարածաշրջանային փոխադրութեան եւ տնտեսական ենթակառուցուածքներու ապաշրջափակման, Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ սահմանազատման եւ սահմանային անվտանգութեան ապահովման աշխատանքներուն, Լեռնային Ղարաբաղի շուրջ իրավիճակին, մասնաւորապէս, Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման հետեւանքով ԼՂ-ի մէջ ստեղծուած մարդասիրական ճգնաժամին, Պաքուի եւ Ստեփանակերտի միջեւ երկխօսութեան միջազգային մեխանիզմի ներդրման: Վարչապետը նշած է, որ ոչ միայն միջանցքը շրջափակելու, այլ նաեւ ԼՂ ժողովուրդին կազմի եւ ելեկտրոնի մատակարարումներէն զրկելու Ատրպէյճանի քաղաքականութեան նպատակն է ցեղային զտման ենթարկել ԼՂ հայութիւնը:

## Ատրպէյճանի Արտաքին Գործերու Նախարարութիւնը Կը Հակադարձէ Միրգոյեանին

Ատրպէյճանի Արտաքին Գործերու Նախարարութիւնը հակադարձած է Հայաստանի դիւանագիտական գերատեսչութեան դեկավար Արարատ Միրգոյեանի կողմէ Բրիտանիոյ պետական նախարար Լեօ Տոքերթիի հետ համատեղ ասուլիսի ընթացքին հնչած յայտարարութիւններուն, կրկին ժխտելով, որ Լաչինի միջանցքին անցակէտ տեղադրելու հետեւանքով Լեռնային Ղարաբաղը յայտնուած է լիակատար շրջափակման մէջ:

«Հայաստանցի պաշտօնեաներու կողմէ անընդհատ կրկնուող անհիմն պնդումները, թէ Ատրպէյճանի կողմէ «Լաչին» հսկիչ-անցագրային կէտի ստեղծումը իբր արգելափակած է ճանապարհը, մարդասիրական խնդիրներու յանգեցուցած է, կը խոչընդոտէ կարմիր խաչի միջազգային կոմիտէի գործունէութեան ու «ցեղային զտման քաղաքականութեան» մաս կը հան-

դիսանայ, Հայաստանի կողմէ իրողութիւնները կեղծելու փորձ է», կը պնդէ Ատրպէյճանի արտաքին քաղաքական գերատեսչութիւնը:

«Հայկական կողմը միջազգային հանրութեան մոլորութեան մէջ զցելու իր փորձերուն պէտք է վերջ տայ: Հայաստանը մինչեւ հիմա կը շարունակէ խրախուսել ատրպէյճանական տարածքներ միջազգային առաքելութիւն ուղարկելը, կը խոչընդոտէ ատրպէյճանական կառավարութեան եւ Ատրպէյճանի Ղարաբաղի տարածաշրջանի հայ բնակիչներուն միջեւ երկխօսութեան: Այդ մենք կը դիտարկենք որպէս միջամտութիւն Ատրպէյճանի ներքին գործերուն: Եթէ Հայաստանը տարածաշրջանին մէջ խաղաղութեան եւ անվտանգութեան կողմնակից է, պէտք է դադարեցնէ նման միջամտութիւնները», յայտարարած է պաշտօնական Պաքուն:

## Եթէ Հայաստան Խաղաղութիւն Կ'ուզէ

Շարունակուած էջ 1-էն

նի համար նոր սպառնալիքներու»: 44-օրեայ պատերազմէն յետոյ խաղաղութեան համաձայնագ-

րի ստորագրման անհրաժեշտութիւնը պնդող Ատրպէյճանի նախագահը բազմիցս յայտարարած է, որ Պաքուն կը շարունակէ հսկայական գումարներ ծախսել

## Լաչինի Միջանցքը Պէտք է Մնայ Ռուսիոյ Հսկողութեան Տակ. Միրգոյեանը՝ Լաւրովին



Սերկէյ Լաւրով եւ Արարատ Միրգոյեան Մոսկուայի մէջ կայացած հանդիպումի ընթացքին

Լաչինի միջանցքը պէտք է ըլլայ Ռուսիոյ վերահսկողութեան տակ, ինչ որ ներկայիս այդպէս չէ, Մոսկուայի մէջ ռուս պաշտօնակիցին հետ հանդիպման մեկնարկին յայտնած է Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրգոյեանը:

«2020 թուականի Նոյեմբերի 9-ի յայտարարութիւնում շատ յստակ ձեւակերպուած է Լաչինի միջանցքի վերաբերեալ ռեժիմը: Լաչինի միջանցքը պէտք է մնայ Ռուսաստանի Դաշնութեան վերահսկողութեան տակ, բայց, ցաւօք, այժմ անհնար է արձանագրել, որ Ռուսաստանի Դաշ-

նութիւնը վերահսկում է Լաչինի միջանցքը», ըսած է Միրգոյեան:

Ռուսիոյ արտաքին գործերու նախարար Սերկէյ Լաւրով իր խօսքին մէջ հաւաստիացուցած է, որ Մոսկուան մտադիր է ընել հնարաւորը եռակողմ հանդիպման ընթացքին արդիւնքներու հասնելու համար:

«Երեք երկիրներու դեկավարներուն կողմէ ստորագրուած եռակողմ յայտարարութիւններու եւ համաձայնագրերու դերը պէտք է որոշիչ ըլլայ բոլոր հարցերու շուրջ բոլոր լուծումները գտնելու», յայտնած է Լաւրով:

## ԱՄՆ Պաշտպանութեան Նախարարութեան Ներկայացուցիչները Կը Շարունակեն Հանդիպումները Երեւանի Մէջ



Զօրավարներ Քիթ Ֆիլիփսն ու Փաթրիք Փրայոր պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանի հետ հանդիպումի ընթացքին

Երեւան կը գտնուին ԱՄՆ Պաշտպանութեան Նախարարութեան ներկայացուցիչները զօրավար-մայոր Քիթ Ֆիլիփսն ու Փաթրիք Փրայորը:

Չանոնք ընդունած է Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը:

Ըստ ԱԽ գրասենեակին՝ գրուցակիցները քննարկած են տարածաշրջանային եւ արտատարածաշրջանային անվտանգային իրավիճակը, կարեւորած է անվտանգութեան ոլորտին մէջ ՀՀ-ԱՄՆ համագործակցութիւնը:

Ըստ Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպանութեան՝ ԱՄՆ Պաշտպա-

նութեան Նախարարութեան ներկայացուցիչները Հայաստանի մէջ են՝ քննարկելու անվտանգութեան ոլորտին մէջ աճող գործընկերութիւնը: Անոնք պիտի հանդիպին Հայաստանի կառավարութեան պաշտօնեաներուն հետ:


Անոնք հանդիպած են նաեւ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանի հետ, քննարկած են պաշտպանութեան բնագաւառին մէջ երկկողմ համագործակցութեան, ինչպէս նաեւ տարածաշրջանային անվտանգութեան առնչուող շարք մը հարցեր:

բանակին վրայ:

«Ինչո՞ւ, որովհետեւ մենք պէտք է միշտ պատրաստ ըլլանք: Կը մեծնան սպառնալիքները, կը մեծնայ վտանգը, եւ մենք միշտ

պէտք է ի վիճակի ըլլանք յաղթահարելու որեւէ սպառնալիք», անցած օրերուն իր ելոյթներէն մեկուն ընթացքին կը պնդէր Իլհամ Ալիեւ:

# Արցախի Խորհրդարանը Կ'արձագանգե Զայաստանի Վարչապետին Յայտարարութիւններուն



Անընդունելի եւ առոչինչ Արցախի Խորհրդարանը այսպէս կ'արձագանգէ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի յայտարարութիւններուն, որոնց մէջ «անտեսուած են Արցախի ինքնիշխանութիւնը, Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը եւ անոր իրացման փաստը»: Նախօրէին ուշ երեկոյեան Արցախի Խորհրդարանին մէջ գումարուած արտահերթ նիստի ընթացքին միաձայն ընդունուած յայտարարութեամբ արցախցի պատգամաւորները կը պնդեն, որ Հայաստանի ղեկավարը կոպտօրէն կը խախտէ ՀՀ անկախութեան հռչակագրին ու Սահմանադրութեան ամրագրումները Արցախի մասին:

«Մեզ համար անընդունելի եւ առոչինչ են Արցախի Հանրապե-

տութեան ինքնիշխանութիւնը, մեր ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը եւ դրա իրացման փաստն անտեսող Նիկոլ Փաշինեանի ցանկացած յայտարարութիւն եւ դրա հիման վրայ կազմած որեւէ փաստաթուղթ: Արցախը երբեք չի հրաժարուելու իր պայքարի անշեղ ուղուց», կ'ըսուի փաստաթուղթին մէջ, որ ներկայացուց պատգամաւոր Վահրամ Բալայեանը:

Ուշ գիշերին հրաւիրուած նիստի ընթացքին ելոյթ ունեցան Արցախի Խորհրդարանին մէջ ներկայացուած բոլոր քաղաքական ուժերուն ներկայացուցիչները, որոնք կոշտ կը քննադատէին, կը դատապարտէին Արցախի հարցով վարչապետ Փաշինեանի յայտարարութիւնները:

## Սամուէլ Բաբայեանը Դեմ Չէ Պաշտպանութեան Պետական Կոմիտէ Ստեղծելուն

Արցախի Անվտանգութեան Խորհուրդի նախկին քարտուղար Սամուէլ Բաբայեանը, որ օրերս կազմակերպած հանրահաւաքին կը պահանջէր զինք պետական նախարար նշանակել, սկզբունքօրէն դէմ չէ Պաշտպանութեան Պետական Կոմիտէ ստեղծելու եւ այդ մարմինին մէջ զինք ընդգրկելու գաղափարին: Բաբայեանի Սամուէլի Մառաշուկեանի «Ազատութեան» փոխանցեցին, որ ան պատրաստ է քննարկելու առաջարկը՝ հասկնալու այդ մարմինին լիազօրութիւններն ու գործառնութիւնը:

Սամուէլ Բաբայեանը նաեւ դէմ չէ ունի մէկուսի՝ այդ շարքին, նախկին պետական նախարար, գործարար Ռուբէն Վարդանեանի հետ համագործակցութեան: Ինչ կը վերաբերի Արախի Յարութիւնեանի հրաժարականին, ապա, ինչպէս փոխանցեցին Բաբայեանի Սամուէլի Մառաշուկեանին, այս պահին Սամուէլ Բաբայեանը այդ հարցին չ'անդրադառնար, քանի որ այս փուլին կը քննարկուի Պաշտպանութեան կոմիտէի ստեղծման միջոցով կառավարման նոր ձեւի հնարաւորութիւնը:

1992-ին Արցախի մէջ ստեղծուած Պաշտպանութեան Կոմիտէի օրինակով կառավարման կերպ ձեւաւորելու առաջարկով հանդէս



Արցախի Անվտանգութեան Խորհուրդի նախկին քարտուղար Սամուէլ Բաբայեան

եկաւ Արցախի Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասեանը՝ ընդգծելով, որ եթէ այդ տարբերակը չ'աշխատի, ապա նախագահ Արախի Յարութիւնեանը պէտք է հրաժարական տայ:

Պաշտպանութեան Պետական Կոմիտէն այն ժամանակ Արցախին մէջ կատարած է գործադիր եւ մասամբ օրէնսդիր իշխանութեան գործառնութիւնը: Կոմիտէի նախագահը Ռուբէն Վարդանեանն էր, որուն վրայ դրուած էին վարչապետի պարտականութիւնները

# Փաշինեանը՝ Արցախը Ատրպեյճանի Կազմին Մէջ Ծանցնալու Եւ Սահմանադրութիւնը Խախտելու Մասին

«Ատրպեյճանը, մեր ընկալմամբ, ԼՂ-ում ցեղային գտման եւ ցեղասպանութեան քաղաքականութիւն է իրականացնում, եւ մեր խնդիրն է ամէն ինչ անել այդ քաղաքականութեան իրագործումը թոյլ չտալու համար եւ, եթէ հնարավոր է այդ քաղաքականութիւնը փոխելու ուղղութեամբ՝ ոչ միայն միջազգային հանրութեան կողմից իրականացուող ճնշումներով, այլեւ Ատրպեյճանի հետ կառուցողական բանակցութիւնների միջոցով եւ նաեւ Պաքու-Ստեփանակերտ հաստատութեան կերկիսութիւն ձեւաւորելու միջոցով», այս մասին ասուլիսի ընթացքին ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Անդրադառնալով սահմանադրութեան հնարաւոր խախտման մասին հարցումին, ըստ որուն, եթէ Հայաստանը Արցախը ճանչնայ Ատրպեյճանի կազմին մէջ, կը խախտուի սահմանադրութիւնը, վարչապետը ըսաւ, որ 1989 թուականին ՀՀ Գերագոյն Խորհուրդը եւ ԼՂ Մարզային Խորհուրդը որոշում կայացուցած են Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի վերամիաւորման վերաբերեալ, որմէ յետոյ 1990 թուականին ՀՀ-ն ընդունած է անկախութեան հռչակագիր՝ յղում ընելով նաեւ այդ որոշման: 1991 թվականին ԼՂ-ն յայտարարած է անկախութիւն: «Ումից է հռչակել այդ անկախութիւնը: Տարբերակ 1՝ ՀՀ-ից, եւ եթէ այդ տարբերակն է, ապա Գերագոյն Խորհուրդը եւ Մարզային Խորհուրդը որոշումը խախտուել է, թէ՞ ոչ: Եթէ խախտուել է, ապա ինչու խախտողները պատասխանատուութեան չեն ենթարկուել: Եթէ Ատրպեյճանից, ապա Ատրպեյճանից անկախութիւն հռչակելու պարագայում անկախութեան հռչակագիրը եւ Մարզային Խորհուրդի որոշումը խախտուել է, թէ՞ ոչ: Որովհետեւ եթէ վերամիաւորուել է ՀՀ-ի հետ, ապա ումից է անկախութիւն հռչակում: 1995 թուականին ՀՀ-ն ընդունել է սահմանադրութիւն, 1997-ին Լեւոն Տէր Պետրոսեանը հրապարակել է իր «Պատերազմ, թէ խաղաղութիւն. լրջանալու պահը» յօդուածը, որտեղ ասել է, թէ ԼՂ անկախութեան հարցում մենք բարեկամներ չունենք եւ, ըստ էութեան, ասել է, որ դա հնարաւոր չէ», ըսած է Փաշինեան, ապա հարց տուած. «Գերագոյն Խորհուրդի որոշումը, հռչակագիրը, Սահմանադրութիւնը խախտուել է, թէ՞ ոչ»:

Ապա Փաշինեան կը յիշեցնէ 1998 թուականի իշխանափոխութեան յետոյ քննարկուած «Ընդհանուր պետութիւն» բանակցային փաստաթուղթը, ուր արձանագրուած է, որ ԼՂ-ն ինչ-որ տիպի միաւոր է Ատրպեյճանի տարածքային ամբողջականութեան մէջ: Ապա վարչապետը յիշեցուց նաեւ Ատրպեյճանի եւ Հայաստանի միջեւ տարածքներու փոխանակութեան մասին բանակցութիւնները, որով Մեղրին կը փոխարինուէր Լեռնային Ղարաբաղի հետ, եւ կը հարցնէ. «Սա Սահմանադրութեան խախտում է, թէ՞ ոչ: Սրանից յետոյ ընդունուել է Մատրիտեան սկզբունքները, որի առանցքային դրոյթներէն մէկը եւ տէ ֆաքթօ, եւ տէ իւրէ այն է, որ ԼՂ կարգավիճակի ճշտգրտման հարցը պէտք է համաձայնեցուի Ատրպեյճանի հետ՝ ապա-

գալու տեղի ունեցող հանրապետութիւն: Հարց՝ Սահմանադրութիւնը, հռչակագիրը եւ 1989-ի որոշումը խախտուել է, թէ՞ ոչ: Որովհետեւ, եթէ անցեալում, ըստ մեր ասածին հանրաքուէ է տեղի ունեցել եւ կարգավիճակը ճշգրտուել է, ապագայում ի՞նչ հարաբերւել է տեղի ունենալու: Եւ ապագայում տեղի ունենալիք հանրաքուէի մասին համաձայնութիւնը գրոյցարել է անցեալում տեղի ունեցած հանրաքուէն», ըսաւ Նիկոլ Փաշինեան եւ հարցուց. «Հռչակագիրը, Սահմանադրութիւնը խախտուել են, թէ՞ ոչ: Յաջորդը՝ ասուում է, որ հաւանական հանրաքուէն չի կարող սահմանափակել ԼՂ որ-է կարգավիճակ, որը եղել է հայկական կողմի դիրքորոշումը: Սա նշանակում է, որ այդ համաձայնութեամբ ԼՂ-ն կարող էր լինել Ատրպեյճանի մաս՝ ընդ որում՝ առանց որեւէ կարգավիճակի», ըսաւ վարչապետը եւ կրկին հարցուց. «Սահմանադրութիւնը, հռչակագիրը խախտուել է, թէ՞ չի խախտուել: Յաջորդը՝ երբ ասուել է, որ հանրաքուէն պետք է տեղի ունենայ կողմերի միջեւ համաձայնեցուած ժամկետներում՝ կողմերն էլ Հայաստանն ու Ատրպեյճանն են: Եթէ ԼՂ-ն ինքնորոշուել է, մենք էլ չենք համարում իրեն Ատրպեյճանի մաս, ինչի՞ ենք Ատրպեյճանի հետ համաձայնեցուում: Դրանով խախտուել է Սահմանադրութիւնը, թէ՞ ոչ: Հանրաքուէի բովանդակութեան հետ կապուած մի հանգամանք էլ Հայաստանի նախագահի նախկին գլխաւոր Խորհրդարանի ժիրայր Լիպարիտեանը բացայայտեց՝ ասելով, որ Ատրպեյճանի դիրքորոշումը եղել է այն, որ որեւէ հանրաքուէ պէտք է լինի, ոչ թէ անհատական հանրաքուէ, այլ համայնքային հանրաքուէ: Այսինքն՝ որոշումը պետք է կայացուի ոչ թէ քանի հոգի ինչի օգտին է կողմ կամ դէմ քուէարկել, այլ հայ համայնքը Ղարաբաղի ինչի օգտին է կողմ կամ դէմ քուէարկել եւ ատրպեյճանական համայնքի ինչի օգտին կամ դէմ է քուէարկել, եւ եթէ երկու համայնքները նոյն կերպ են քուէարկում որոշումը համարում է կայացուած, եթէ նոյն կերպ չեն քուէարկում որոշումը համարում է չկայացուած: Չեմ կարող պնդել, որ հայկական կողմը համաձայնել է դրան, բայց, այնուամենայնիւ, փաստ է, որ հայկական կողմը համաձայնուել է Լեռնային Ղարաբաղի ատրպեյճանական համայնքի՝ որպէս ԼՂ բնակչութեան ամբողջ մաս՝ քուէարկելու իրաւունքի վերաբերեալ»:

Փաշինեան ըսաւ, որ այս շարքը դեռ երկար կարելի է թուարկել: Վարչապետը կտրականապէս անհամաձայնութիւն յայտնեց լրագրողի այն դիտարկման, թէ Հայաստանի կառավարութիւնը «խաչ կը քաշէ Արցախի վրայ»:

Լրագրողի դիտարկման, թէ վերը թուարկածները ընդամենը բանակցային փաստաթուղթեր եղած են եւ «միս ու արիւն» չեն ստացած, Փաշինեան ըսաւ. «Այդ բանակցային բովանդակութիւնը չի ցնդել: Այդ բանակցային բովանդակութիւնը միջազգային ըմբռնում է ձեւաւորուած բանակցութիւնների վերաբերեալ: Դրանք դատարկութեան մէջ գոյութիւն չունին»:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**  
 Massis2@earthlink.net (626) 797-7680

### 86,6 Հազար Քառակուսի Կիլոմետրը

Շարունակուած էջ 1-էն

«Մեր խնդիրն է՝ հնարաւորին աւագ աւարտին հասցնել բանակցութիւնները եւ ստորագրել խաղաղութեան պայմանագիր: Մեր խոնարհ շատ աշխուժ է աշխատում», ըսաւ վարչապետը՝ յաւելելով. «Ուաշինկթընից առաջ խաղաղութեան պայմանագրի մեր խմբագրումները նորից փոխանքէցել ենք, դա 4-րդ խմբագրումն էր, եւ հիմա, ըստ էութեան, իրենց արձագանգին ենք սպասում, որը յոյս ունենք, կ'արտայայտի Ուաշինկթընում տեղի ունեցած քննարկումները, պայմանաւորութեան շրջանները, ըմբռնման յառաջընթացը»:

Վարչապետին խօսքով՝ եթէ Ատրպէյճանը այս շաբաթ փոխանցէ իր արձագանգը, եւ եթէ հայկական կողմը այդ առաջարկները համարէ ընդունելի փոխզիջումային տրամաբանութեան մէջ, ինչու՞ չէ: «Բայց այս պահին դեռեւս չենք ստացել իրենց արձագանգները», շեշտեց վարչապետը:

Խօսելով ՀԱՊԿ-ի եւ Ռուսաստանի հետ յարաբերութիւններու մասին Փաշինեան ըսաւ, «ՀԱՊԿ առաքելութիւնը Հայաստանի տարածքում չի գործում մի պարզ պատճառով, որ չի մատնանշում, թէ որն է իր պատկերացրած Հայաստանի Հանրապետութեան տարածքը: Երբ ՀԱՊԿ-ը դա յստակ ընդգծի, խնդիրների 90 տոկոսը կը վերանայ», ըսաւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Սա հիմնական խնդիրն է, բայց ինչու՞նք տոկոսը կա՞մ դա է, կա՞մ բխում է դրանից: Երկրորդը՝ մենք Արեւմտաքից Ռուսաստանին դուրս քշելու կամ յարաբերութիւնները խզելու որեւիցէ ազդակ չենք ստանում, եւ չեմ կարծում, որ այդպիսի ազդակ երբեք կը լինի»:

Ազդակները կարող են լինել երկկողմ յարաբերութիւնների զարգացման կամ ընթացքի մասին, ինչը վերաբերում է այդ թւում Ռուսաստանին: Այսինքն, մենք մեր երկկողմ յարաբերութիւնները ՌԴ մեր գործընկերների հետ շատ թափանցիկ ենք քննարկում եւ կարծում ենք, որ եւ՛ ձեռք կ'առնեն իրենց իրաւունքները մեր մտահոգութիւնները:

գութիւնների մասին, որոնք մենք ունենք տարածաշրջանում Ռուսաստանի Դաշնութեան եւ մեր յարաբերութիւններում առկայ իրադրութեան վերաբերեալ»:

«Յառաջիկայում Ազգային ժողովում կը սկսուեն 2022 թուականի պետական պիւտճէի կատարման հաշուետուութեան քննարկումները», ասուլիսի իր բացման խօսքին մէջ յայտնեց վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Ներկայացնելով քանի մը տուեալ՝ վարչապետը նշեց, որ 2022 թուականի պետական պիւտճէի հարկային եկամուտներու փաստացի կատարողականը կազմած է 1 թրիլիոն 926 միլիարդ դրամ. «Սա այն գումարն է, որ փաստացի մուտքագրուել է պետական պիւտճէ: 2022 թուականի պետական պիւտճէի հարկային եկամուտները 2017 թուականի համեմատն են ցուցանիշը գերազանցել են 768 միլիարդ դրամով կամ 66,3 տոկոսով, իսկ ընդհանուր ծախսերը 2022 թուականին 2017-ի համեմատ աւելի են եղել 150 միլիարդ դրամով կամ 163 տոկոսով»:

Վարչապետը չի շեղուց, որ 2021-22 թուականներուն ՀՀ կառավարութիւնը 21,8 տոկոս բաժնեմաս ձեռք բերաւ Զանգեզուրի պղնձամոլիբդենային գործարանին մէջ. «2022 թուականին ԶՊՄԳ-ն վճարել է պատմականօրէն աննախադէպ բարձր թուով հարկեր՝ 145 միլիարդ 636 միլիոն դրամ, ինչը շուրջ 7 միլիարդ դրամով աւելին է, քան 2012, 2013, 2014, 2015, 2016, 2017 թուականներին ԶՊՄԳ-ի կողմից վճարուած հարկերը միասին վերցրած: Այսինքն՝ 6 տարիների հանրագումարից 7 միլիարդով աւելի շատ հարկ է վճարել 2022 թուականին»:

Ինչպէս նշեց Նիկոլ Փաշինեանը, պետական պիւտճէի եկամուտները առանցքային նշանակութիւն ունին երկրի բոլոր, այդ շարքին՝ անվտանգային, մարդկային դրամագլուխի զարգացման խնդիրները լուծման համար, եւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք կ'ապահովեն պետական պիւտճէի եկամուտները:

### Հայաստանը Հնդկաստանի Մէջ Ռազմական Կցորդ Պիտի Ունենայ

Հնդկաստանի մէջ Հայաստանի դեսպանատան մէջ ռազմական կցորդ պիտի նշանակուի:

«Հնդկական կողմի ռազմաարդիւնաբերական համալիրի պետական կառուցների, մասնաւոր կազմակերպութիւնների եւ ընկերութիւնների կողմից փոխգործակցութիւն իրականացնելու ուղղութեամբ վերջին ժամանակաշրջանում ցուցաբերած մեծ հետաքրքրութիւնն անհրաժեշտութիւն է առաջացրել Հնդկաստանի Հանրապետութիւնում ստեղծել Հայաստանի Հանրապետութեան ռազմական կցորդի հաստիք», նշուած է որոշման հիմնաւորումներուն մէջ:

Ռազմական կցորդը պէտք է իրականացնէ ներկայացուցչական աշխատանք, որ կը ներառէ երկու երկիրներու ռազմական գերատեսչութիւններուն հետ պաշտօնական

համար այդ մէկը շատ կարեւոր է : Միշտ ուզած եմ հայրենիքի մէջ մենահամերգ մը ունենալ», - ըսաւ Գոհարը :

Յանկութենէն՝ նպատակ, երազանքէն՝ իրականութիւն : Պեղաբուսի ոյ մէջ ստեղծագործող հայուհիին երեւանեան մենահամերգը տեղի ունեցաւ «Առնօ Պապաճանեան» համերգասրահին ներս :

Join us for a Special

## Live Greek Music Dinner Dance Party

**Saturday**  
**June 03, 2023**  
7:30 PM

let the music take you to Greece

Live Music With Famous Singer

**Takis Kokotas and his Band**

**LIVE DJ ELITE**

ATHENA restaurant  
933 N. Brand Blvd.  
Glendale, CA. 91202

**LIVE BOUZOUKI**

Donation \$150

for tickets please call or text :  
(626) 460-0450

Proceeds to Benefit Underprivileged Armenian Children

# Ձուկցերիացի Հարիւր Երեւելիներու Վկայութիւնը 1915 Թուականի Հայոց Ցեղասպանութեան Մասին

(Անհերքելի փաստաթուղթ մը Ձուկցերիոյ դաշնային արխիւէն)

ԴՊԿՏ. ԱԲԷԼ ԲՅՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ (Շարունակուած Նախորդ Թիւէն)


1915 թուականի Յունիսին, թրքական բանակի հրամանատարութիւնը տեղական իշխանութիւններուն կը հրահանգէ, որ անոնք պարտաւոր են գործադրելու օրէնքը. եթէ մահմետականներ համարձակին տարագրուած հայերը իրենց տուները ընդունելով ապաստան տալու, «ապա անոնք պէտք է կախաղան հանուին իրենց տուներուն առջեւ, իսկ տուները՝ հրկիզուին»։ Ան տեղական իշխանութիւններէն խստիւ կը պահանջէ ցուցաբերել այնպիսի նախանձալուգութիւն մը, որ «ոչ մէկ հայ գերծ չմնայ տարագրուելէ»։ Թուրք եւ մահմետական բնակչութեան նաեւ սպանալից կը նախագրուէր, որ այն միւսիւրմանները, որոնք կը փորձեն պաշտպանել հայերը, «եթէ զինուորականներ են, ապա կը զրկուին իրենց կոչումէն ու անյապաղ կը կանգնին դատարանի առջեւ, իսկ եթէ քաղաքացիական ծառայողներ են, իսկոյն կը հեռացուին իրենց զբաղեցուցած պաշտօններէն եւ կը կանգնին զինուորական դատարանի առջեւ»։

Ա. Համաշխարհային Պատերազմի աւարտին, համաձայն վերոնշեալ 24 Մայիս 1915 թուականի ազդարարութեան, թէ «մարդկայնութեան եւ քաղաքակրթութեան դէմ յանցագործութիւն»ներու մեղադրանքով պատերազմի յանցագործները անձնապէս պատասխանատուութեան պիտի ենթարկուին, Ֆրանսա եւ, առաջին հերթին, Մեծն Բրիտանիա, Կ.Պոլսոյ գրաւումէն ետք, ճնշում կը բանեցնեն օսմանեան նոր կառավարութեան վրայ՝ ընթացք տալու Երիտթուրք պարագլուխներու դատավարութեան։ Սոյնը կ'իրականանայ 28 Ապրիլին մինչեւ 25 Յունիս 1919 թուականին։ Այս առթիւ, հակառակ այն իրողութեան, որ իթթի-հատական պարագլուխներ իրենց իրագործած խոշորագոյն եղեռնագործութիւններու փաստաթուղթերուն մեծ մասը արդէն ոչնչացուցած էին, կը բացայայտուին պատերազմական յանցագործութիւններու, զանգուածային կոտորածներու, սպանդներու, տարագրութիւններու, ոճիրներու վերաբերեալ մեղադրական ապացոյցներ՝ ծածկագիր հեռագրեր, պաշտօնական գրութիւններ, հրահանգներ, հրամաններ, ակնատեսներու վկայութիւններ եւ այլն։

### «Հայազինց Ծրագրի մը մանրամասնութիւնները»

Այսպէս, Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ կը յատնաբերուի նաեւ այլ փաստաթուղթ մը, որ «Ճակատամարտ» թերթը իր 13 Յունուար 1919 թուականի թիւին մէջ կը հրատարակէ՝ զայն թարգմանաբար արտատպելով նոյնպէս Կ.Պոլսոյ տպագրուող «Stamboul» ֆրանսատառ թերթի 12 Յունուար 1919 թիւէն։ «Ճակատամարտ» զայն հայ հանրութեան կը ներկայացնէ «Թանկագին փաստաթուղթ մը. Հայազինց Ծրագրի մը մանրամասնութիւնները» խորագրով։ «Ներքին Գործոց Նախարարութիւն Վարչութիւն աշխրէթներու եւ Գաղթականներու գետեղման Յանձ-

նաժողովի։ Թիւ 61 - 666  
Հայերու իսլամացման եւ հաւատափոխներու անշարժ կալուածներու մասին հետեւելիք հրահանգներ։ Այս հրահանգները կազմուած են ընդհանուր ապահովութեան տնօրէնութեան մատուցած տեղեկագրին վրայ։  
Ա.- Կ'ընդունուի հաւատափոխութիւնը իրենց բնակավայրերուն մէջ մնացած ու չտարագրուած հայերուն։  
Բ.- Նմանապէս կ'ընդունուի հաւատափոխութիւնը անոնց, որ տարագրութեան ատեն մասնաւոր հրամանով վար դրուած են իրենց ճամբուն վրայ եւ կամ իրենց տունները եւ կամ ուրիշ տեղ մը զրկուած են։  
Գ.- Այն հայերը, որոնց հաւատափոխութիւնը ընդունուած է վերի պայմաններուն համաձայն, պիտի ստանան իրենց ինչքերը եւ կամ, եթէ ծախուած են, անոնց փոխարժէքը։  
Դ.- Յարմար դատուած է, որ տարագրութեան միջոցին իրենց մնացած վայրերուն մէջ իսլամներու հետ ամուսնացած կիներուն եւ աղջիկներուն տուները լքուած չենքերէն։  
Ե.- Երբ գաւառներու, գիւղերու եւ թաղերու բնակիչները անհատաբար կամ զանգուածաբար իսլամացման ինչիք ներկայացնեն, պէտք է հաւատափոխութեան մեկնակետութիւնները կատարել, զանոնք թուրք գիւղերու մէջ բաժնելէ ետք, պայմանով որ անոնց թիւը այդ տեղերու իսլամ բնակչութեան թիւին հետ բաղադրուած չանցնի հինգ առ հարիւր համեմատութիւնը։  
Զ.- Եթէ որոշ տեղ մը մնալու արտօնուած տղաքներու պատկանող ինչ-չորսներու պարագրներ, այդ կորուստներու փոխարէն, վերեւ յիշուած տղաքներուն պիտի տրուի Պետութեան անուան արձանագրուած, լքեալ գոյքերէն բան մը։  
26 Հոկտեմբեր 1331



Ճակատամարտ, Երկուշաբթի, 13 Յունուար 1919, էջ 2

րած պատրաստակամութիւնը։ Ան, փաստորէն, ամենամոլեռանդ իրագործողներէն մին էր իթթի-հատական արիւնկզակ պարագլուխներու վերոյիշեալ գաղտնի համաժողովի ընդունած ծրագրին՝ ոչ մէկ հայ թողուլ արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ ամբողջ տարածքին, Հայկական հարցը ի նպաստ Օսմանեան կայսրութեան միանգամընդմիջ լուծել կարենալու համար՝ վերացնել հարցին գոյութեան դրդապատճառը հանդիսացող ենթական։ Այս առնչութեամբ հակասականը այն է, որ, չորս ամիս անց,

կրօնափոխութիւնը կրկին կ'արտօնուի եւ ան կը վերահսկուի ուղղակի Թալէաթի կողմէ՝ մասնաւոր եւ կամայական արտօնութիւններ շնորհելու միջոցով միայն այն հայ կանանց, որոնք աչրիացած են, նաեւ այն աղջիկներու պարագրներ, որոնք ճարահատ կամ բռնի կ'ամուսնանային մահմետականներու հետ։ Որբացած մանկահասակ աղջիկներն ու տղաքը նոյնպէս կ'ենթարկուէին կրօնափոխութեան՝ թրքական որբանոցներու կամ իս-

Շար.ը էջ 13

**ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION**

**AEBU SCHOLARSHIP PROGRAM**

**APPLICATIONS NOW OPEN**  
Through June 30, 2023

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

To apply, visit our website  
**WWW.AEBU.ORG**

626•344•7321

**AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE**  
1060 North Allen Avenue  
Pasadena, CA 91104

# Ձուկցերիացի Հարիր Երեւելիներու Վկայութիւնը

Շարունակուած էջ 12-էն

լամ ընտանիքներու մէջ: Թերեւս բախտաւոր պէտք է համարել այն բիւրաւոր երեխաները, որոնց կեանքը այս ճամբով խնայուեցաւ, մինչդեռ բիւրբիւրոց մնացորդացը անխնայ բնաջնջուեցաւ մահու աքորի ճամբաներուն վրայ կամ արիւն-ուռչտ եղեռնագործներու դիւակին կիրքերուն պատճառով:

Եզրակացնելով՝ պէտք է ըսել, որ Երիտթուրքեր, Օսմանեան Կայսրութեան իշխանութիւնը իւրացնելէ ետք, Հայոց Յեղասպանութիւնը իրագործելու համար կը սահմանեն քանի մը օրէնքներ, անոնց մեծ մասը ստոյգ իրենց իսկ ձեռքով ոչնչացուելով անհետացած է, որոնց մէջ ոմանք ինչքան ալ փորձեն սքողել կամ պատերազմական պայմաններ պատրուակելով արդարացնեն օսմանեան կառավարութեան ձեռնարկած բռնարարքները, միեւնոյն է, այս եւ նմանատիպ օրէնքներուն եւ հրահանգներուն ամբողջութիւնը անմարդկային դժիւմ գործողութիւններու իրականութիւն մը կը պարզէ, որ ոչ այլ ինչ է, քան «մարդկայնութեան եւ քաղաքակրթութեան դէմ» իրականացած պետական ծանրագոյն յանցագործութիւն մը:

## Երիտթուրքերու յանցագործ գաղափարախօսութիւնը

Արդարեւ, պետական յանցագործութեան առաջնորդող ամենայն չարեաց թունաւոր արմատը արդէն ի սկզբանէ առկայ էր Երիտթուրքերու գաղափարախօսութեան մէջ: Անոնք մանաւանդ Ա. Աշխարհարամարտի սկիզբը կը ներկայացնէին «տարամերժ հայրենասիրութեան» տեսակ մը, որ ամբողջապէս կը բացառէր Օսմանեան Կայսրութեան այլազգ, մասնաւորաբար ոչ իսլամ ժողովուրդները՝ վերապահելով բոլոր մենաշնորհները միմիայն օսմանցի թուրք ժողովուրդին: Սոյնը յստակ արտայայտուած էր 11 Նոյեմբեր 1914 թուականի այն լրջութիւն մէջ, ուր ի նպաստ պատերազմին խանդավառ կը տարափողուէր.

«Պէտք է մոռնանք, որ եթէ մենք մեր մասնակցութիւնը կը բերենք այս պատերազմին, այդ միայն մեզի սպառնացող վտանգէն փրկուելու համար է: Մենք կը հետապնդենք շատ աւելի կարեւոր նպատակ մը, որ մեր ազգային իտէալին իրականացումն է: Մեր ժողովուրդին եւ մեր հայրենիքին ազգային իտէալը այն է, որ մենք պէտք է ոչնչացնենք թշնամին եւ հաստատենք բնական սահման մը, որ մեզի թոյլ կու տայ միաւորուելու նոյն ցեղի մեր եղբայրներուն հետ: Աւելին՝ մեր կրօնական աշխարհահայեացքը մեզի կը պատուիրէ ազատագրել իսլամական աշխարհը անհաւատներու գերիշխանութենէն... Մենք կը պայքարինք մեր հայրենիքին, մեր կրօնին եւ մեր ազգային իտէալներուն համար» (10):

Պետական յանցագործութիւն իրագործելու վտանգը նախօրօք առկայ էր Երիտթուրքերու փանթուրանական եւ համախալապական հզօր կայսրութիւն մը ստեղծելու ծաւալապաշտական նկրտումներուն մէջ, որուն «բնական» սահմանները պիտի ընդլայնուէին անդրկովկասեան ամբողջ երկրամասով ու հասնէին մինչեւ Միջին Ասիոյ տափաստանները, ընդհուպ մինչեւ


սահմանագիծը չինական պարիսպներուն: Այս գաղափարախօսութիւնը նաեւ այսօր հետեւողականօրէն կը պարզէ թուրքիոյ ծաւալապաշտ ու յարձակողապաշտ քաղաքական նոյն իրավիճակը՝ փաստացի ցոյց տալով, որ ան երբեք հրաժարած է իր դարաւոր իտէալին իրականացումը հետապնդելէ՝ ըլլալ փանթուրանական հին թէ նոր կայսրութեան մը ստեղծելու անդիմադրելի մոլուցքէն:

## Կոչ ուղղուած Ձուկցերիոյ ժողովուրդին

1915 թուականի Մայիսի վերջերը, երբ Ձուկցերիոյ մէջ տպագրուող ազդեցիկ քանի մը թերթեր Երիտթուրքական կառավարութեան հայերու դէմ իրագործած նոր ոճիրներու եւ տեղահանութիւններու վերաբերեալ առաջին լուրերը կը հաղորդեն, իսկոյն բոլոր օրաթերթերը գրեթէ ամէն օր կը սկսին անդրադառնալ Օսմանեան Կայսրութեան տարածքին հայ ժողովուրդի բնաջնջման մասին: 18 Յունիս 1915-ին, «Basler Nachrichten» թերթը կը վկայէ, թէ «Թուրքիոյ մէջ հայերու դէմ հալածանքները լայնածաւալ չափերով կը կատարուին...»: 25 Օգոստոսին, «Journal de Genave» թերթը կը հրատարակէ յօդուած մը «Les massacres d'Armenie» խորագրով, որուն մէջ մանրամասն տեղեկութիւններ կը հաղորդէ Օսմանեան Կայսրութեան մէջ տեղի ունեցած զանգուածային կոտորածներու եւ տեղահանութիւններու մասին՝ վերջաւորութեան աւելցնելով. «Ի դէպ, միանգամայն հաւաստի աղբիւրներէ յայտնի է, որ թրքական կառավարութիւնը յայտարարած է, թէ հայ ժողովուրդի ամբողջական եւ վերջնական բնաջնջումը անհրաժեշտութիւն է, ուստի ոչ ոք կրնայ զայն շեղել այս ծրագրի իրականացումէն»:

Հետեւեալ տարիներուն, Գերմանիոյ եւ Ձուկցերիոյ մէջ յատկապէս եկեղեցական մարդասիրական կազմակերպութիւններ իրենց ակաւաւոր ներկայացուցիչներով սերտօրէն կը գործակցէին միմեանց հետ, իրենց կողմէ կեանքի կոչուած նպաստամատոյց կառուցներու միջոցաւ օգնութեան ձեռք մեկնելու Օսմանեան Կայսրութեան տարածքին ցեղասպանուող իրենց հաւատակից քոյրերուն եւ եղբայրներուն:

Էմմանուէլ Ռիկկենպախ, որ Պազելի մէջ հրատարակուող «Mitteilungen ber Armenien» (Տեղեկութիւններ Հայաստանի մասին) թերթին խմբագիրն էր, առաջինը կը հանդիսանայ 15 Օգոստոս 1915 թուականին հրատարակուող հրատապ կոչ մը ուղղուած հայ ժողովուրդի բարեկամ Ձուկցերիոյ ժողովուրդին՝ նպաստամատոյց շտապ օգնութիւններ կազմակերպելու նպատակով: Իսկոյն անոր օրինակին կը հետեւին Ձուկցերիոյ զանազան քաղաքներու եւ շրջաններու մէջ սուլթանական զանգուածային կոտորածներէն ի վեր արդէն տեղակայուած եւ գործող հայնապաստ յանձնախումբերը, որոնք Սեպտեմբեր/Յոկտեմբեր 1915 թուականին կը հրատարակեն պատմական կարեւոր նշանակութիւն ունեցող կոչ մը ուղղուած գուկցերիացի ժողովուրդին: Սոյնը իր մէջ կը ցոլացնէ բարոյական նկարագրի տէր եւ կրօնագրած ճշմարիտ ապ-



Ձուկցերիացի հարիր երեւելի անձնաւորութիւններու ստորագրութեամբ կոչը ուղղուած Ձուկցերիացի ժողովուրդին, Սեպտ.-Յոկտ., 1915 թ.

րուներ կրող մարդոց բացառիկ կեցուածքը՝ դրսեւորելով անկեղծ կարեկցութիւն մահուան հոգեվարքի դատապարտուած քրիստոնեայ ժողովուրդի մը հանդէպ, բայց միաժամանակ կը ներկայացնէ անհերքելի վկայութիւն մը 1915 թուականի Հայոց Յեղասպանութեան պատմական իրողութեան մասին, որ յականէ յանուանէ կը ստորագրուի գուկցերիացի հարիր երեւելի անձնաւորութեանց կողմէ: Նկատի ունենալով Հայ Դատին եւ մեր համահայկական պայքարին համար առկայ փաստաթուղթին շահեկանութիւնը, նաեւ անոր պատմական վաւերականութիւնը, զայն թարգմանաբար առաջին անգամ ըլլալով կը ներկայացնենք ստորեւ.

## ԿՈՉ՝ ՁՈՒԻՅԵՐԻՈՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՍԵՍԿՄԵՐԵՐՅՈՒԿՄԵՐԵՐ 1915

Մինչ պատերազմը իր վրայ կը կեդրոնացնէ ամբողջ աշխարհին ուշադրութիւնը եւ կը ներգրաւէ եւրոպական մեծ տէրութիւններուն բոլոր ուժերը, թուրքիոյ մէջ տեղի կ'ունենան այնպիսի իրադարձութիւններ, որոնք գարհուրելի են նոյնիսկ սարսափելիին սովոր մեր ժամանակին համար ու կը գերազանցեն այն, որ այդտեղ պատահած է անցեալին:

Սոյնը ոչ այլ ինչ է, քան ամբողջ քրիստոնեայ ժողովուրդի մը՝ հայերու համակարգուած բնաջնջումը, որ այժմ կ'իրագործուի՝ հաստատուելու համար իսլամի կատարեալ տիրապետութիւնը թրքական կայսրութեան մէջ:

Հարիր հազարաւոր հայեր արդէն կ'ամ սպանուած, կ'ամ իրենց հայրենիքէն դէպի Միջագետքի տափաստանները տարագրուած, կ'ամ ալ թշուառօրէն ոչնչացուած պէտք է ըլլան ուրիշ վայրերու մէջ: Մեծ թիւով մասնաւորաբար կանայք եւ երեխաներ ստիպուած եղած են ընդունելու իսլամը:

Սոյն իրողութիւնները հաստատուած են այն մարդոց արժանահաւատ վկայութիւններով եւ տեղեկագրութիւններով, որոնք բոլոր առումներով անբասիր են եւ իրենց գիտելիքները քաղած են ականատեսի սեփական վկայութիւններով:

Ներքոյ ստորագրեալները ոչ միայն կը փափաքին Ձուկցերիոյ ժողովուրդին գործուն օժանդակութիւնը ինդերել՝ մեղմացնելու համար այն մեծ կարիքը, որ կը տիրէ տարաբախտ հայ ժողովուրդի վերապրողներուն մէջ, այլ անոնք պարտք կը զգան նաեւ ամբողջ աշխարհին ուշադրութիւնը հրաւիրել այս իրադարձութիւններուն վրայ՝ դիմելով բոլոր երկիրներու հասարակական կարծիքին, որպէսզի այն, ինչ այժմ տակաւին կարելի է ընել Կ.Պոլսոյ մէջ, անմիջապէս ձեռնարկուի վերապրող հայերու պաշտպանութեան համար:

Pfr. H. Andres, Bern.  
Prof. C. Béguelin,  
Rektor der Universität Neuenburg.  
Prof. Br. Bloch, Basel.

# Երաժշտարուեստի Երախտաւորը՝ Շուշիից



## ՅԱԿՈՒ ՍՐԱՊԵԱՆ

Այսօր գերութեան մէջ յայտնուած հայոց հնորեայ բերդաքաղաք Շուշին, որը ժամանակին «Անդրկովկասի կոնսերվատորիա» պատուանուանն էր ժամանացել, ապրել է մշակութային կեանքով, մեր ժողովրդին պարզեցնել մեծանուն գաւակներ՝ գրողներ, համբաւաւոր գինուորականներ, պատմաբաններ, երաժիշտներ: Վերջինների շարքում է անուանի կոմպոզիտոր, հասարակական գործիչ, խմբավար, երգիչ եւ մանկավարժ, արուեստի վաստակաւոր գործիչ Դանիէլ Ղազարեանը: Նրա երգերից շատերն այսօր էլ են համարուած երգարուեստի սիրահարներին:

Երաժշտական ընտանիքում է ծնուել ապագայ արուեստագէտը. հայր Աւագը երգ-երաժշտութեան ուսուցիչ էր Շուշուէն թեմակաւ դպրոցում, մայր Մանուշակը լաւ ձայն ունէր եւ հարմոն էր նուագում: Օրհնեալ այս հարկի տակ մշտապէս հնչում էին երգն ու մեղեդին. բազմանդամ ընտանիքում երգում, նուագում էին բոլորը, բայց երաժշտական ընդունակութիւններով առանձնանում էր փոքրիկ Դանիէլը՝ եօթ տարեկանում արդէն նուագում էր սրինգ, ապա նաեւ՝ ջութակ եւ թաւ: Հայրը, նկատի առնելով փոքրիկի հրաշալի ձայնը, որոշում է, որ որդին պիտի քահանայ դառնայ: Եւ ուսման է տալիս ծննդավայրի թեմակաւ դպրոցում, որտեղ կրօնի հետ մէկտեղ ուսուցանւում էին նաեւ հոգեւոր երգեր եւ շարականներ: Գուցէ եւ իրականանար հայրական ցանկութիւնը, եթէ Շուշուէն Մարիամեան եւ թեմակաւ դպրոցներում աշխատելու չհրաւիրուէր Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի շրջանաւարտ Ստեփան Դեմուրեանը, ում մասին յետագայում երախտագիտութեամբ էր խօսելու կոմպոզիտորը. «Եթէ թեմակաւ դպրոցը տուեց բազմաթիւ գրագէտ երաժշտասէրներ, որոնք շնորհակալ գործունէութիւն ծաւալեցին Արցախում եւ այլուր, ապա դրա համար նախեւառաջ պարտական ենք մեր սիրելի ուսուցչին...»:

Ստեփան Դեմուրեանի հետ հանդիպումը բախտորոշ է դառնում Դանիէլի համար. վճուում է երաժիշտ դառնալու նրա ճակատագիրը: Դպրոցական տարիներին ակտիւօրէն մասնակցում է ուսուցչի կազմակերպած քառաձայն երգեցիկ խմբին, որը սօսական օրերին երգում էր ճարտարապետական կոթողի՝ Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց

եկեղեցում, մասնակցում կիրակնօրեայ պատարագներին, կատարում մեներգեր, ելույթներ ունենում դպրոցական հանդէսներում: Բայց երկար էր տեւելու Դանիէլի ուսումնառութիւնը. բազմանդամ ընտանիքի հոգսերը թեթեւացնելու նպատակով, ստիպուած թողնում է դպրոցը եւ սկսում գրադուել կօշկակարութեամբ: Շուշու վեց տարուայ արհեստաւորութեան ընթացքում շնորհաշատ պատանին շարունակում է համագործակցել Ստեփան Դեմուրեանի հետ, երգում նրա ղեկավարած խմբում: 1907-ին՝ իր ուսուցչի եւ Գրիգոր Սիւնիի խորհրդով թողնում է Շուշին եւ երաժշտական կրթութիւն ստանալու նպատակով մեկնում Պաքու, ընդունւում երաժշտական ուսումնարանի վոկալ բաժին, գուգահեռաբար յաճախում Պաքուի բանուորական զինարարին ինստիտուտի ուսանական եւ օտար լեզուների ֆակուլտետներ: Այստեղ էլ կազմակերպում է իր առաջին երգեցիկ խումբը, ելույթներ ունենում Պաքուում, Բախխանում եւ այլուր: 1908-ի աշնանը մեկնում է Թիֆլիս, երաժշտական բարձրագոյն մասնագիտական կրթութիւն ստանալու՝ ուսանելով կոնսերուատորիայի վոկալ բաժնում, ակտիւ համագործակցում Ռոմանոս Մելիքեանի եւ Ազատ Մանուկեանի հետ՝ «Երաժշտական լիկայի» կազմման գործում: Միաժամանակ երգեցիկ խմբեր է ստեղծում Նուխիում, Շուշիում, իսկ Գանձակում եւ Ալեքսանդրապոլում կազմաւորում է ժողգործիչների նուագախումբը:

1911-ին Դանիէլ Ղազարեանը հրաւիրւում է Կողոման, որտեղ երգ-երաժշտութեան դպրոցում ստեղծում է քառաձայն երգչախումբ, ծաւալում համերգային գործունէութիւն, որը շարունակում է Նոր Պայազետում, Վլադիկավկազում հիմնում է առաջին լարային նուագախումբը: 1922-ին նա արդէն Պաթումում է՝ Աջարիայում երաժշտական ստուդիա հիմնելու նախաձեռնութեամբ, որը յետագայում վերածուելու էր ժողովրդական կոնսերուատորիայի: Երկու տարի անց մեծ դժուարութիւններ չաղթահարելու գնով նմանատիպ ստուդիա է բացում Լենինականում: Հենց այստեղ էլ դպրոցի ասների մասնակցութեամբ բեմադրւում են կոմպոզիտորի մանկական օպերաները՝ «Յաղթուած բազեն», «Գայլը», «Գիքոնը»: Այդ տարիներին նա ստանձնում է նաեւ դպրոցների եւ մանկավարժական ուսումնարանի երգ-երաժշտութեան դասերի կազմա-

կերպումը: Ամառային արձակուրդները ժամանակ ակտիւօրէն գործում է կովկասի հայաշատ վայրերում: Համերգներ կազմակերպելու նպատակով մեկնում է Արմաւիր, Նոր Նախիջեւան, Ռոստով, Խարկով, Նովոռուսիյսկ: Քառաձայն երգչախմբերից բացի, կազմակերպում է մանկական երգչախմբեր, օպերային ներկայացումներ, համերգներ: Ոգեւորուած Հիւսիսային կովկասում ունեցած յաջողութիւններից՝ կոմպոզիտորը համարձակ քայլ է կատարում՝ իր ստեղծագործութիւնները ներկայացնելու նպատակով մեկնում է Մոսկուա, ապա՝ Լենինգրադ: Համերգները ցնծութեամբ են ընդունւում: Յատկապէս խանդավառութեամբ են ընդունւում նրա «Ուռենին», «Լանջեր մարջան», «Քոյր իմ նազելի», «Անուշ գարուն» եւ այլ երգեր, որոնք բնորոշում են նրա ստեղծագործական դիմապատկերը:

Վերադառնալով Լենինական՝ Դանիէլ Ղազարեանը ստանձնում է երաժշտական դպրոցի ուսումնական մասի վարիչի պաշտօնը՝ մինչեւ 1933 թ., այնուհետեւ տեղափոխւում է Երեւան, աշխատում մայրաքաղաքի տարբեր դպրոցներում, ուսական մանկավարժական ուսումնարանում, էջմիածնի Գէորգեան ճեմարանում: Նրա ջանքերով Պատանի հանդիսատեսի թատրոնում իր գործունէութիւնն է վերսկսում Երեւանի մանկական օպերան, որտեղ ներկայացւում են «Յաղթ-

ուած բազեն», «Գայլը», «Շունն ու կատուն», «Ուլիկները», «Տիկնիկ-գիգիկը», «Չարի վերջը», մանկական այլ օպերաներ:

Կոմպոզիտորի շնորհակալ աշխատանքներից մէկն էլ կոյրերի քառաձայն երգեցիկ խմբի եւ նուագախմբի կազմակերպումն էր: Երգչախմբային ինքնագործ արուեստի զարգացման գործում նրա նուիրական աշխատանքի արդիւնք էր Երեւանի Ուսուցիչների տան քառաձայն կապելլայի ստեղծումը, որը 1945-ին մեծ յաջողութեամբ հանդէս է եկել Մոսկուայում՝ Ինքնագործ երգչախմբերի համամիութենական օլիմպիադայում:

Դանիէլ Ղազարեանի վաստակը բարձր են գնահատել անուանի կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքեանը, երաժշտական աշխարհի այլ նուիրեալներ: Իսկ շուշեցի երաժիշտը սերունդներին է ժառանգել ոչ միայն մանկական, դպրոցական երգեր, օպերաներ, երաժշտական պատկերներ, այլեւ ուսմանների եւ երգերի շարք, որոնք յազեցած են ժողովրդական, գոլանական երգերին բնորոշ տարրերով: Մեծարժէք են նրա ժողովրդական, գոլանական երգերի մշակումները, խմբերգերը: Անդադրում երաժիշտն իր գործունէութեան ընթացքում ստեղծել է շուրջ 250 երգեցիկ խումբ, 40 քաղաքներում տուել աւելի քան 1000 համերգ: Իսկ նրա «Քոյր իմ նազելի»-ն իւրաքանչիւր հայի հոգու խորանում է... «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

## Միջազգային Մրցոյթներու Դափնեկիր

Շարունակուած էջ 11-էն

«Համերգին ընթացքին հնչեցին միջազգային օիերային երգահաններու ստեղծագործութիւններ՝ Պելլիսի, Փուչինի, Տոնիցցի, Հենտէլ, Կուսո: Հնչեցին նաեւ ուսմանաներ», - ըսաւ նա:

Բացի միջազգային երգահաններու ստեղծագործութիւններէն, Գոհարը հանդէս եկաւ նոր կատարմամբ եւ ներկայացուց ժամանակակից երգահան Նարինէ Զարիֆեանի «Աղօթք» ստեղծագործութիւնը:

Այս ստեղծագործութիւնն էր, որ ներշնչեց երգչուհին վերադառնալու հայրենիք եւ սորվելու դասական երգեցողութիւն բաժնէն ներս: Գոհարը 5 տարեկանէն տարուած է երգ-երաժշտութեամբ: Ան սորված է Չայքովսկիի անուան երաժշտական դպրոցէն ներս, այնուհետեւ՝ Սերկէյ Ռախմանինովի քոլէճին մէջ: Բարձրագոյն կրթութիւնը ստացած է Մոսկուայի մէջ:

«Հայաստանէն Քալինինկրատ համերգի եկած էին հայ երգիչներ, ինչպէս՝ Սոֆիա Սայատուրեանը, եւ երբ ես լսեցի անոր երգը, շատ հաւանեցայ, կարելի է ըսել՝ նոյնիսկ

սիրահարեցայ եւ հասկցայ, որ անպայման կ'ուզեմ ընդունուիլ Երեւանի պետական երաժշտանոցը», - ըսաւ Գոհարը:

Գոհար Յակոբեանը Հայաստանի հետ կապուած շատ յուշեր ունի: Հայրենիքը կը համարէ իր տաքուկ անկիւնը, ուր կ'ուզէ միշտ վերադառնալ:

«Իմ ուսանողական տարիներս շատ ուրախ անցած են: Այստեղ նաեւ շատ ընկերներ ձեռք բերած եմ: Ծանօթացայ իմ համալսարանական ընկերոջս հետ, որ յետագային դարձաւ իմ ամուսինս: Շատ կը սիրեմ մեր երաժշտանոցը: Շատ կը սիրեմ Երեւանը», - ըսաւ Գոհար Յակոբեանը:

Հայաստանի մէջ տեղի ունեցած մենահամերգն ետք, երգչուհին առաջարկ ստացած է ելույթ ունենալու նաեւ Սուրբ Փետրոսապոլի մէջ: Յառաջիկային, ան պիտի ներկայացնէ նոր ստեղծագործութիւն մը՝ «Ave Maria»-ն: Գոհարը մեծ ուրախութեամբ կը սպասէ այդ ստեղծագործութեան անդրանիկ ներկայացման: Ան յոյս ունի, որ թէ՛ հայ եւ թէ՛ միջազգային հանդիսատեսը բարձր կը գնահատէ իր աշխատանքը:

**Կը Փնտռուի Խնամակալ**  
 Կլէնտէլի շրջանին մէջ կը փնտռուի խնամակալ՝ երէց, սակայն առողջ տիկնոջ մը համար:  
 Նախընտրաբար խօսի Արաբերէն եւ կամ Արեւմտահայերէն, ունենայ ու վարէ ինքնաշարժ:  
 Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել կամ Text ընել Քաթիային՝ 818-281-0351 թիւով:

### Սերգեյ Սմբատեանը Նշանակուել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի Ազգային Դեսպան



Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախմբի հիմնադիր-ղեկավար, Մալթայի ֆիլհարմոնիկ նուագախմբի գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատեանը նշանակուել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի ազգային դեսպան:

Անցած տարի պրն Սմբատեանը, ՅՈՒՆԻՍԵՖ-ը եւ Հանրային հեռուստարձկերութիւնը համատեղ ստեղծեցին վարպետութեան ծնողավարութեան դաս այն մասին, թէ ինչպէս ծնողները կարող են նպաստել երեխաների զարգացմանը, խթանել նրանց ուղեղի աճը եւ հոգ տանել նրանց հոգեկան առողջութեան համար՝ օգտագործելով երաժշտութեան ուժը: Այս տարի Մայիսի 15-ին՝ Ընտանիքի միջազգային օրուայ կապակցութեամբ պրն. Սմբատեանը միացել էր ՅՈՒՆԻՍԵՖ-ին՝ Արթիկի երկու գիւղական բնակավայրերում բացելու այլընտրանքային նախադպրոցական հաստատութիւնների դռները փոքրիկ երեխաների առջեւ:

Պարոն Սմբատեանը աջակցել է ՅՈՒՆԻՍԵՖ-ին՝ բարձրաձայնելով երեխաների խնդիրները եւ նպաստել երեխաների իրաւունքների շուրջ իրազեկուածութեան բարձրացմանը՝ յատուկ ուշադրութիւն դարձնելով ծնողական պատշաճ խնամքին եւ վաղ մանկութեան կրթութեան եւ զարգացման կարելուածութեանը երեխաների կեանքի լաւագոյն սկիզբն ապահովելու համար:

«Երբ խօսքը վերաբերում է երեխաների իրաւունքներին, մենք բոլորս նոյն թիմում ենք: Մենք հրաւիրում ենք մարդկանց, ովքեր պատրաստ են փոփոխութիւններ բերել երեխաների կեանքում, ովքեր կարող են անել հնարաւորն ու

անհնարինը, միանալու մեզ եւ օգնելու ապահովել, որ Հայաստանում բոլոր երեխաներն ունենան հնարաւորութիւններ եւ աջակցութիւն՝ իրենց ողջ ներուժը զարգացնելու համար: Մենք ուրախ ենք, որ մանատրօ Սերգեյ Սմբատեանը համաձայնել է միանալ ՅՈՒՆԻՍԵՖ-ի խումբին եւ մենք անհամբերութեամբ սպասում ենք համատեղ աշխատանքի յաջորդ երկու տարիներին՝ լոյս սփռելու Հայաստանում երեխաների կարիքների եւ նպատակների վրայ», - նշել է Քրիսթինէ Վալգանդը՝ Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչը:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի դեսպանները յայտնի անձիք են: Որպէս արուեստի, երաժշտութեան, կինոյի, սպորտի եւ այլ ոլորտների նշանաւոր անձիք՝ նրանք կարեւոր դեր են խաղում՝ լոյս սփռելու այն մարտահրաւէրների վրայ, որոնց բախուում են երեխաներն ամբողջ աշխարհում: Դեսպանները տրամադրում են իրենց ժամանակը՝ բարձրացնելու իրազեկուածութիւնը եւ մոբիլիզացնելու աջակցութիւն, որպէսզի օգնեն ՅՈՒՆԻՍԵՖ-ին հասնել եւ աջակցել առաւել անապահով երեխաներին եւ դեռահասներին:

«Ինձ համար մեծ պատիւ է միանալ ՅՈՒՆԻՍԵՖ-ին՝ նպաստելու երեխաների իրաւունքների պաշտպանութեանը եւ աջակցելու այն ծրագրերին, որոնց շնորհիւ Հայաստանում հնարաւոր կը լինի սովորելու եւ զարգանալու հաւասար ու հասանելի պայմաններ ստեղծել իւրաքանչիւր երեխայի համար», - ասաց Սերգեյ Սմբատեանը:

### Զուիցերիացի Հարիւր Երեւելիներու Վկայութիւնը

- Prof. P. Böhringer, Basel.
- E. Bonhôte, Nat.-Rat, Neuenburg.
- Fel. Bonjour, Nat.-Rat, Lausanne.
- L. Bonnard, Syndic, Nyon.
- Prof. E. Bovet, Zürich.
- H. Boveyron, Grossratspräsident, Genf.
- A. Brüstlein, Adv., Bern.
- Chr. Buchmann-Schardt, Basel.
- Prof. G. Castellaz, Freiburg.
- Francesco Chiesa, Lugano.
- Prof. Rob. Chodat, Genf.
- Dr. H. Christ-Socin, Riehen.
- Th. Diethelm, St. Gallen.
- Prof. N. Dubois, Neuenburg.
- Pfarrer E. Dusseiller, Genf.
- Prof. L. Emery, Lausanne.
- Pfr. E. Etter, Rorschach.
- Nat.-Rat H. Eugster-Züst, Speicher.
- Dir. Em. Favre, Waadt.
- Leopold Favre, Genf.
- H. Fazy, Nat.-Rat, Genf.
- Pfr. H. Fichter, Basel.
- Pfr. P. Flury, Schiers.
- Dr. J. Fragnière, apostol. Protonotar, Freiburg.
- Pfr. Osk. Frei, Alt St. Johann.
- Pfr. K. Fueter, Olten.
- Dekan J. Ganz, Zürich.
- Prof. Luc. Gautier, Genf.
- Dr. Rud. Geigy, Basel.
- Prof. Ph. Godet, Neuenburg.
- Kirchenrat U. Guhl, Frauenfeld.
- C. Gutzwiller, Basel.
- Stadtammann H. Hässig, Aarau.
- Pfr. J. Hauri, Davos.
- Dr. Friedr. Hegar, Zürich.
- Dr. Karl Henking, Schaffhausen.
- Dr. Eduard Herzog, Bischof der christkatholischen Kirche der Schweiz, Bern.
- Prof. Andreas Heusler, Basel.
- Alt Pfarrer Hugendubel, Bern.
- Stadttrat Aug. Huggler, Bern.
- Dir. E. ImHof, Schaffhausen.
- Dozent Dr. Hans Iselin, Basel.
- Pfr. C. Juchler, Herisau.
- Pfr. Paul H. Kind, Schwanden.
- Prof. K. Kirchhofer, Schaffhausen.
- Stadttrat Conr. Leu, Schaffhausen.
- Alt Reg.-Rat F. Manatschal, Chur.
- Prof. K. Marti, Bern.
- Prof. Alf. Martin, Genf.
- Dekan J. Meier, Frauenfeld.
- A. de Meuron, Nat.-Rat, Lausanne.
- Prof. G. Meyer von Knonau, Zürich.
- Pfr. E. Miescher, Basel.
- G. de Montenach, Staatsrat, Freiburg.
- Pfarrer Alex. Morel, Bern.
- Prof. Paul Moriaud, Genf.
- Oberrichter P. Müri, Aarau.
- Dr. Musy, Staatsratspräsident, Freiburg.
- Prof. Ed. Naville, Genf.
- Gust. Naville, Zürich.
- E. Perrier, Staatsanwalt, Freiburg.
- Pfr. C. Pestalozzi, St. Gallen.
- Dr. Pestalozzi-Pfyffer, Zug.
- E. Picot, Bundesrichter, Lausanne.
- Prof. Conradin Planta, Chur.
- Ed. Quartier la Tente, Staatsrat, Neuenburg.
- Prof. de Quervain, Basel.
- Prof. Ragaz, Zürich.
- Gonzague de Reynold, Freiburg.
- Dr. Eug. Richard, alt Ständerat, Genf.
- Pfr. A. Rothenberger, St. Gallen.
- Dr. César Roux, Lausanne.
- Pfr. E. Rysler, Bern.
- Alfred Sarasin, Basel.

Stadttrat Samuel Scherz, Bern.  
 Pfr. A. Schlatter, Herisau.  
 Pfr. Th. Schlatter, St. Gallen.  
 Pfr. E. Schnyder, Schaffhausen.  
 Pfr. Emil Schultze, Chur.  
 Pfr. A. Salis, Basel.  
 Ed. Secrétan, Nat.-Rat, Lausanne.  
 P. Seippel, Genf.  
 Prof. G. Senn, Basel.  
 Prof. Fr. Siebenmann, Basel.  
 J. Sigg, Nat.-Rat, Genf.  
 Pfr. Ant. Spohn, Zürich.  
 Pfr. E. Staehelin, Basel.  
 Dir. Rud. Staub, Baden.  
 Dr. von Tavel-Stettler, Bern.  
 E. Usteri-Pestalozzi, Zürich.  
 Dir. Virieux, Lausanne.  
 Prof. Eberh. Vischer, Basel.  
 Dr. Wilhelm Vischer, Basel.  
 Jean von Wattenwyl, Bern.  
 Ständerat Dr. O. Wettstein, Zürich.  
 Pfr. G. Witzemann, Rothrist.  
 Alt Pfarrer Leo v. Wyss, Thalwil.

Հայութեան մնացորդացին համար հարկ է զուիցերիոյ մէջ անյապաղ նիւթական օժանդակութեան հաւաք ձեռնարկել: Այս նպատակով արդէն իսկ կան յանձնաժողովներ եւ ուրիշներ եւս պիտի կազմուին»: 1915 թուականի Ապրիլ 24ին եւ հետեւեալ օրերուն, Կ.Պոլսոյ մէջ կը ձեռքարկուի հայ մտաւորականութեան եւ ազգի երեւելիներուն մեծ մասը, ու աքսորուելով Թուրքիոյ խորերը՝ հետզհետէ վայրագաբար կ'ոչնչացուի Երիտթուրք պարագլուխներու հրահանգով եւ իթթիհատական ոճրագործներու ձեռքով: Մինչեւ Մայիսի վերջն արդէն իր համատարած եւ կործանարար ընթացքը վերացուցած էր հայ ազգաբնակչութեան տեղահանումներու, մահու աքսորի եւ կոտորածներու լայն թափը:

Այսօր, երբ յետադարձ հայեացքով մը մեր կեանքին մէջ կ'այժմէականացնենք հայ ժողովուրդի միլիոն ու միլիոն նահատակներուն չիշատակը, անոնք, սրբադասուած կամ ոչ, մէկ պատգամ կը թելադրեն մեզի՝ արդարութիւն պահանջել այնքան բիրտ եւ անիրաւ դարձած աշխարհէն, եւ որպէս պահանջատէր վաղ թէ ուշ հասնիլ մեր պապերու սուրբ երազի իրականացման: Մենք ենք կրողը չիշելու պատասխանատուութեան՝ նախ մեր միլիոնաւոր զոհերուն, ապա մենք մեզի համար: Մեր անձնական եւ ազգային հաւաքական չիշողութեան մէջ պարտաւոր ենք վառ պահելու այն պատմութիւնը, որ ներկայ է, եւ անցեալը, որ անցած է: Պէտք է միշտ չիշել ու ըլլալ զգաստ՝ կանխարգիլել կարենալու համար մեզի սպառնացող վտանգը եւ թոյլ չտալ, որ աղետալի պատմութիւնը վերստին կրկնուի մեր ժողովուրդի կեանքին մէջ: Մեզմէ կախուած է ամէն ինչ՝ վառ պահելու եւ ժամանակի քայքայիչ օրէնքին եւ մոռացութեան դէմ պաշտպանելու համար չիշելու իրաւունքը, որ յարաճուն ուժ եւ պայքար, բայց ստոյգ յաղթանակ մըն է միաժամանակ:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ**  
**(200 ՇՈՒԻ ՇԱՄԱՐ)**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**  
**ՇԵՆՆԱՅԵՆԵԼ (626) 797-7680**

**www.massisweekly.com**  
**Weekly News Updates**

9- Յմն. Ternon Y., «Tabu Armenien, Geschichte eines Völkermord», Berlin, 1981, S. 151

### «Մանչեսթր Սիթի» Ստացաւ Ախոյեանական Գաւաթը



«Մանչեսթր Սիթի» խաղադաշտին վրայ տեղի ունեցաւ Անգլիոյ նորընծայ ախոյեաններու պարգևատրութիւնը: Գատալոնացի Խոսեպ Գուարդիոլայի գլխավորած խումբը յաջորդական երրորդ տարին նուաճեց տիտղոսը:

Նախավերջին հանգրուանին «Մանչեսթր Սիթին» (36 խաղ) 1:0 արդիւնքով պարտութեան մատնեց Լոնտոնի «Չելսիին» եւ վաստակած՝ 88 կէտ: Սակայն տիտղոսը ապահոված էր նախքան այս հանդիպումը, քանի որ երկրորդ տեղը գտնուող Լոնտոնի «Արսենալը» (37 խաղ) 0:1 արդիւնքով պարտուած էր «Նոթինգհեմ Ֆորեսթին» եւ ունի 81 կէտ:

### «Մանչեսթր Եունայթըդն» Ուժեղ Եր «Պորնմուտն», «Լիվերպուլը» Հաւասարեցաւ «Ասթոն Վիլայի» Հետ

Անգլիոյ առաջնութեան 37-րդ հանգրուանին «Մանչեսթր Եունայթըդն» հիւրընկալեց «Պորնմուտն» եւ յաղթեց նուազագոյն արդիւնքով: Միակ կողմ 9-րդ վայրկեանին նշանակեց պրագիլցի կիսապաշտպան Կազեմիրոն:

36 խաղէն յետոյ «Մանչեսթր Եունայթըդն» 69 կէտով հաւասարեցաւ երրորդ տեղը գտնուող «Նիւքասլին» (36 խաղ) եւ չորրորդն է:

«Լիվերպուլը» 1:1 արդիւնքով հաւասարեցաւ խաղցաւ «Ասթոն Վիլայի» հետ:

«Լիվերպուլը» 66 կէտով 5-րդ տեղն է: «Ասթոն Վիլան» 58 կէտով 7-րդն է:

### Տէ Խեան՝ Մրցաշրջանի Լաւագոյն Դարպասապահ

«Մանչեսթր Եունայթըդն» սպանացի խաղցող Դավիտ Դէ Խեան ճանչուեցաւ անգլիական Փրեմիեր Լիգայի այս մրցաշրջանի լաւագոյն դարպասապահ՝ արժանանալով «Ոսկէ ձեռնոց» մրցանակին:



Առաջնութեան Տէ Խեան 17 խաղերու ընթացքին կող չէր արտօնած իր պաշտպանած բերդէն ներս:

Երկրորդ տեղը «Լիվերպուլի» պրագիլցի դարպասապահ Ալիսոն Պեքերն է՝ 14 խաղ առանց կող արտօնելու:

Տէ Խեան երկրորդ անգամ է որ կ'արժանանայ այս մրցանակին: Առաջին անգամ ան լաւագոյնը ճանաչուած էր 2017-2018 թուականներու մրցաշրջանին:

### «Սեւիլիան» 7-րդ Անգամ Կը Խաղայ ՈւԵՖԱ-ի Գաւաթի Կամ Եւրոպայի Լիգայի Եզրափակիչին

Սպանական «Սեւիլիան» 7-րդ անգամ հանդէս կու գայ ՈւԵՖԱ-ի գաւաթի խաղարկութեան կամ Եւրոպայի Լիգայի եզրափակիչին: Կիսաեզրափակիչին «Սեւիլիան» յաղթահարած է թուրքի «Եոլլաթուրք» արգելքը (1:1, 2:1):



«Սեւիլիան» խաղցած է նաեւ 2006 եւ 2007 թուականներու ՈւԵՖԱ-ի գաւաթի եզրափակիչներուն եւ 2014, 2015, 2016, 2020 թուականներու Եւրոպայի Լիգայի եզրափակիչներուն:

6 անգամ ալ գաւաթը նուաճած է «Սեւիլիան», որ մրցանակակիր է այդ ցուցանիշով:

Եզրափակիչը տեղի կ'ունենայ Մայիսի 31-ին Պուտափեշտի մէջ: «Սեւիլիան» մրցակիցը կ'ըլլայ իտալական «Ռոման»:

### ՉԼ-ի Եզրափակիչը «Ինթերի» Եւ «Մանչեսթր Սիթի» Միջեւ

Եւրոպայի Ախոյեաններու Լիգայի եզրափակիչը խաղը կը կայանայ Իտալիոյ փոխախոյեան Միլանի «Ինթերի» եւ Անգլիոյ ախոյեան «Մանչեսթր Սիթիի» միջեւ:



«Մանչեսթր Սիթին» կիսաեզրափակիչին պայքարէն դուրս մղեց Ախոյեաններու Լիգայի անցած տարուայ գաւաթակիր Մատրիտի «Ռեալին» (1:1, 4:0) արդիւնքներով:

Կիսաեզրափակիչին Իտալական երկու խումբերուն՝ «Ինթերի» եւ «Միլանի» միջեւ պայքարը ախարտեցաւ Սիմոնէ Ինձագիի գլխավորած խումբի յաղթանակով (2:0, 1:0):

Եզրափակիչը տեղի կ'ունենայ Յունիսի 10-ին Իսթամպուլի մէջ:

### Հենրիխ Մխիթարեանը Բժշկական Քննութեան Տակ Ե

Միլանի «Ինթերի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը բուժման ընթացքի մէջ է, կը հաղորդէ իտալական ազգային մամուլի ծառայութիւնը: Հայաստանի հաւաքականի նախկին աւագը վնասուածք ստացած էր «Միլանի» դէմ Ախոյեաններու Լիգայի կիսաեզրափակիչի պատասխան հանդիպման առաջին խաղակէսին եւ փոխարինուած էր:



Այսօր առաւօտեան Հենրիխ Մխիթարեանը բուժզննում անցած է: Կիսապաշտպանի մօտ ախտորոշուած է ձախ ազդրի դիմացի ուղիղ մկանի ձգում: Անոր վիճակը դարձեալ կը գնահատուի յառաջիկայ օրերուն», - կը նշուի «Ինթերի» հաղորդագրութեան մէջ:

### Տորթմունթի «Պորուսիան» Յաղթեց Եւ Բարձրացաւ Առաջին Տեղ

Գերմանիոյ առաջնութեան 33-րդ հանգրուանին Տորթմունթի «Պորուսիան» մրցակիցի խաղադաշտին վրայ հանդիպեցաւ «Աուկսպուրի» հետ եւ առաւելութեան հասաւ 3:0 արդիւնքով:

«Պորուսիան» 70 կէտով գլխավորեց մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտ առաջ է երկրորդ տեղը նահանջած ախոյեան «Պայերն Միւնխէն»-ը, որ այս հանգրուանին 1:3 արդիւնքով պարտուած էր «ՌԲ Լայպցիգին»:

### «Ինտերը» Պարտուեցաւ «Նապոլիին»

Իտալիոյ առաջնութեան 36-րդ հանգրուանին փոխախոյեան «Ինթերը» հիւրընկալեց նորընծայ ախոյեան «Նապոլիին» եւ պարտուեցաւ 1:3 արդիւնքով:

«Ինթերի» եւ Հայաստանի հաւաքականի նախկին աւագ, կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը ազդրի մկանային վնասուածքի պատճառով կը բացակայէր խաղէն:

«Նապոլիին» վաստակած է 86 կէտ, «Ինտերը» 66 կէտով երրորդն է:

### «Պարսելոնան» Պարտուեցաւ «Ռեալ Մադրիտին»


Սպանիոյ ախոյեանութիւնը արդէն իսկ նուաճած «Պարսելոնան» ընդունեց «Ռեալ Մադրիտին», որու ֆուտպոլիստները սպանացի Չաւրի գլխավորած խումբի համար կազմեցին ախոյեանական միջանցք:

«Պարսելոնան» սեփական խաղադաշտին վրայ պարտութիւն կրեց 1:2 արդիւնքով:

«Պարսելոնան» վաստակած է 85 կէտ, «Ռեալ Մադրիտը» չորրորդն է՝ 65 կէտ:

### ՄԼՍ. Լուկա Սելարաեանի Կողմ Զե Փրկած «Քոլումպուս Քրուին» Պարտութենէն

Հիւսիսամերիկեան ՄԼՍ-ի առաջնութեան 13-րդ հանգրուանին «Քոլումպուս Քրուին» հիւրընկալուած է «Սինսինատիին» եւ պարտութիւն կրած է 2:3 արդիւնքով:



«Քոլումպուս Քրուին» առաջին կողմ 40-րդ վայրկեանին նշանակած է Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Լուկա Սելարաեանը:

«Յինսինատիին» Արեւելեան քոնֆերսիս առաջատարն է՝ 30 կէտով: «Քոլումպուս Քրուին» 8-րդ տեղն է՝ 18 կէտով: